

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig  
SPORTS MAGAZINE

№2. 8ԱԻՆ, 2007, ԹԻՎ 78 (301-302) VOL. XXVI №78

العدد السابع والعشرون - الثامن

ԵՂԲ. ՏՈՔԹ. ՄԻՍԱՔ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆԻ ԿՈՐՈՒՍԸ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՂԱՅԻՆ  
ՄԱՐՉԱՆԱԴԵՐ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ





# ԹԻԼԻՆ ՆԻԼԹ ԵՐՂ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 ماززيك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Ի Ֆիշատակ 3
- Վերջին Յարգանք 8
- Ցաւակցագիրներ 11
- Կենսագրական Գիծեր 12
- Վկայութիւն Մը 16
- Յուշ 18
- Ակնարկ 20
- Մասնագիտ. Մասնագիտ. 22

## ԱՅՍ ԹԻՒՐ

«Մարզիկ»ի այս թիւը կ'անդրադառնայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝ եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի մեծ վաստակին ու կորուստին: Հետեւաբար թիւէն դուրս կը մնան թերթին կարգ մը բաժինները (սկառուտական, մանկապատանեկան, խաչքառ...), ինչպէս նաեւ՝ շրջաններէ ստացուած բաւական թղթակցութիւններ:


## Գ Ո Յ Ժ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գոծէ իր երկարամեայ վաստակաշատ նախկին ատենապետին՝

### ԵՂԲ. ՏՈՔԹ. ՄԻՍԱՔ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 27 Յունիս 2007ին, Միացեալ Նահանգներու մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 ԻՉ. ՏԱՐԻ, 2007, ԹԻՒ 7-8 (301-302)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ  
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Արօ Մոսիկեան  
 Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Միհրան Շիմշիրեան, Սամուէլ  
 Մկրտիչեան, Կարօ Պետրոսեան,  
 Տոքթ. Միսաք Արզումանեան,  
 Յ. Անահունի եւ շրջաններու  
 թղթակիցներ:

Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան  
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Չեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

### ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատաւաճառի սակն է 3000 լ.ն.:  
 Տարեկան բաժանորդագրութեան  
 սակ ճշդուած է 35000 լ.ն.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեանը  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):





Հ Ա Յ Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ր Կ Ի Տ Ե Կ Ո Ն Ո Ւ Մ Ի Ա Ս Պ Ե Ր Ա Տ Ո Ւ Մ

# ԳՈՐԾԻ՝ ՄՂԵԼ

**Վ**աստակաշատ իրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի կորուստին հետ, նոյն խօսքերն է որ կը կրկնուին մեր շուրջ. «Հիներէն մէկն ալ գնաց: Ո՞վ պիտի փոխարինէ վայն: Նորեր չեն պատրաստուիր: Այսօրուան սերունդը տարբեր է: Անտարբեր է: Ընդհանրապէս անձնակերտն կեանք կ'ապրի: Հակառակ համայնարանական իր պատրաստութեան, հրապարակի վրայ չ'երեւիր: Գործունէայ չէ: Այգային-միութենական կեանքով չի վբաղիր»:

Ու կը յաջորդէ նոյնին շարունակութիւնը. «Մեր ատե՛ն տարբեր էր: Մենք ինչե՛ր կ'ընէինք...»:

Հակառակը ոչ ոք կրնայ պնդել, սակայն անարդար է նաեւ անցեալի ու ներկայի սերունդները իրարու բաղդատել, որովհետեւ մեր կեանքը այնքա՛ն արագ կը վարգանայ, որ մեր շուրջը ոչ մէկ բան նոյնը կը մնայ: Այսօր փոխուած են անձնական ու հաւաքական կեանքի պայմանները, մտայնութիւնները, գործի ըմբռնումներն ու օրուան պահանջները:

Պատմութեան ու նաեւ մեր իրականութեան մէջ հաստատուած է, որ երիտասարդներն են ընկերութեան մը մէջ փոփոխութիւն մտցնողները, յառաջդիմութիւն կերտողները:

Ի պատիւ հին սերունդին, որուն մօտ փորձառութիւնը չի պակսիր, անցեալին տարուած աշխատանքները տուած են իրենց յուսատու արդիւնքը: Նոր սերունդը այսօր կ'ապրի համեմատաբար նպաստաւոր պայմաններու մէջ: Դպրոցներ, միութիւններ, այգային-հասարակական կեանքը առաջնորդող կառոյցներ անցեալէն շատ աւելի լաւ յարմարութիւններով կը գործեն ներկայիս:

Բայց արդեօք այդքանը բաւարա՞ր է: Ինչո՞ւ ուրեմն, տարին քանի մը ան-

գամ, իրաքանչիւր անդարձ մեկնողի հետ նոյն դժգոհութիւնն է որ կը լսուի. «Նորեր չեն պատրաստուիր...»:

Իսկ ո՞վ պիտի պատրաստէ եւ ի՞նչպէս:

Ահա՛ մեծագոյն հարցումը, զոր իր պատասխանը կը փնտռէ:

Նոր սերունդը այդքան ալ անտարբեր չէ. ան ունի ուսում, գիտութիւն, եռանդ եւ կարողութիւն, սակայն անոր կը պակսի մէկ բան՝ փորձառութիւն, որպէսզի արժեցնէ ինքզինք: Իսկ փորձառութիւնը ձեռք կը ձգուի՝ գործելով միայն:

Ուշ կամ կանուխ նոր սերունդը, որ հիմա երիտասարդ է, պիտի անցնի գործի գլուխ: Սակայն եթէ ան նախապէս պատրաստ չէ, գործէն հեռու է, տարիներու ընթացքը բան պիտի չփոխէ իր անփորձութենէն:

Հետեւաբար, չի բաւեր զանգատիլ երիտասարդութենէն: Չի բաւեր նաեւ երիտասարդութեան հայեցի դաստիարակութիւն տալ, պէտք է վայն գործի՛ մղել, աշխատանքի առիթներ ստեղծելով անոր դիմաց:

Մարդուծի տագնապը իր լուծումը ունի, պայմանով որ հիւնի եւ նորի փոխանցման շրջանը ըլլայ աստիճանաբար ու անվզալաբար: Որքա՛ն պիտի տուծէ գործը, եթէ նորերը զան յանկարծակի, ու փոխարինեն մարդիկ, որոնց ամբողջ կեանքը փորձառութեամբ հարուստ եղած է: Պէտք է նորերը օգտուին անոնց փորձառութենէն, եւ ասոր համար միայն մէկ միջոց կայ.- նորերը պէտք է գործեն հիներուն հետ:

Պէտք է թարմացնել ուժերը, անոնց ուղղութիւն տալով: Այդ ժամանակ միայն լուծուած կ'ըլլայ հիւնի եւ նորի խնդիրը, ու այլեւս չենք լսեր. «Հիները կը մեկնին, նորեր չեն պատրաստուիր...»:

# ԱԶԳԻՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԻՆ ՄԵԾ ՆՈՒԻՐԵԱԼԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝  
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝  
ԵՂԲ. ՏՈՔԹ. ՄԻՍԱԲ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

**Դ** ժուար է հաւա-  
րայ, որ եղբ.  
Միսաք Արզու-  
մանեանը չկայ  
այլևս:

Անկարելի է Հ.Մ.Ը.Մ.ր  
պարկերացնել առանց իր  
Կեդրոնական Վարչութեան  
վաստակատու նախկին  
արեւնապետին:

Քոյրս, անխորհր քոյրս,  
պիտի փնտռենք Հ.Մ.Ը.Մ.ի  
գաղափարի քուրմը, փայ-  
լուն բնմասացը, պարկառե-  
լի ժողովականը եւ խաղա-  
պահանջ պարասխանա-  
պուն: Ան, որուն զիտակա-  
կան ողջ կեանքը եղաւ  
Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հայու-  
թեան եւ Հայաստանի անա-  
կարկ նոտրաբերում Պուրճ  
Համուրէն մինչեւ սփիւռք-  
եան հեռաւոր ուրաններ ու  
մինչեւ Մայր Հայրենիք՝ Հա-  
յաստան:

Մփիւրեան դաժան կեանքի բոլոր դառնութիւնները  
ճաշակած մարդն էր եղբ. Արզումանեան: Մէկը, որուն  
կեանքը սորվեցուցած էր հայ ըլլալու գաղափրքը եւ հայ  
մնալու մարտունքը: Ան կը պարկանէր հայապահպանման  
եւ համապիտրեան մեր ջանքերուն լծուած այն եզակի  
սերունդին, որ գիտէր սակն ինչ քաղ փոխարէնը առանց  
որեւէ բան ակնկալելու: Եղբ. Արզումանեան Ազգին ու Գա-  
ղափարին ծառայութեան դրօշը արժանաւորապէս  
սրբանշնամ էր Յովհաննէ Շահինեաններու, Նշան Թի-  
սիզեաններու, Վարդգէ Տէր Կարապետեաններու սերուն-  
դէն եւ ամենայն պարտաճանաչութեամբ ու պարասխա-  
նաբուրութեամբ զայն փոխանցած էր յեզրնոր սերունդին:

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուրի մասնաճիւղի վարչութեան  
մինչեւ Մերջաւոր Արեւելքի Ծրջանային Վարչութեան ան-



դաճակցութիւն եւ Լիբանանի Ծրջանային Վարչութեան  
արեւնապետութիւն, հասնելու համար միութեան ամենէն  
պարասխանաբուր պաշտօնին Կեդրոնական Վարչու-  
թեան արեւնապետութեան, եղբ. Արզումանեան եղաւ ու  
մնաց Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան մեծ սպասարկու  
մը եւ հայ ժողովուրդի քննչերուն անշահախնդիր նոտր-  
եալ մը: Իր ներկայութիւնը յարգանք կը պարտադրէր բոլո-  
րին, իսկ խօսքը կը ներկայացնէր անվիճելի հեղինակու-  
թիւն: Օրինապահ եւ ճշդապահ մարդ էր ան: Արդարամիտ  
ու լայնախոհ կեցուածքներու փրէ: Անոր համար ալ իր  
կարծիքը միշտ փնտրուած էր, իր րեւակէտը միշտ յարգը-  
ւած ու համոզիչ էր: Վերջին հաշուով աշխարհ րեւած  
մարդ էր ան, միութեանական գործով գրեթէ մեր բոլոր գա-  
ղութները այցելած եւ բոլորին մրայնութեան քաջաճա-  
նօր: Իր երին ունէր Հ.Մ.Ը.Մ.ական գործի պարկառելի  
վաստակ մը, որուն դիմաց կարելի չէր չխոնարհիլ երկի-  
րաճութեամբ ու հիացումով:



Եղբ. Արզումանեան աւանդապահ մարդ էր: Մինչեւ իր կեանքին վերջալոյսը ան ամբողջ էն կառչած մնաց այն բոլոր սկզբունքներուն եւ աւանդութիւններուն, որոնք մեր ազգը ա՛զգ կը պահեն, իսկ Հ.Մ.Ը.Մ.ը՝ Հ.Մ.Ը.Մ.: Այս իսկ պարճառով ան խիստ ու անխնայ բունցար շարերուն, որովհետեւ երբեք չհանդուրժեց որեւէ նահանջ՝ աւանդական արժէքներէ: Անոնք որոնք սակայն զինք մօտէն ճանչնալու բախարաւորութիւնը ունեցած են, կրնան անվարան հասարակել, որ իր խարաքիք նալուածքին փակ էրք. Արզումանեան ունէր հայրական փափուկ սիրտ մը, գորովալի հոգի մը, որ զիպէր փեղի՛ն մեծն ու փոքրը զնահարել, ամէնէն փոքր յաջողութեամբ իսկ ուրախանալ եւ մարդոց հետ յաւ բնկերութիւն բնել:

Մեծ է եղբ. Արզումանեանին կազմակերպական, հրապարակագրական եւ բանախօսական վաստակը Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Ան մեծ ներդրում ունեցած է նաեւ հայ կեանքի այլ բնագաւառներուն՝ Լիբանանի բեմական կառոյցներուն, Համազգայինին եւ ազգային բազմաթիւ հասարակութիւններուն:

Այսօր բոլորը կը սզան իրենց մեծ երախարարին կորուստը: Կը սզան մանաւանդ անոնք, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ կէս դարու ծանօթութիւն եւ գործակցութիւն ունեցած են հետը: Այս փխտը առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը յայտարարած է եօթօրեայ սուգի շրջան:

Ու հիմա, հասած է պահը, որ մեր վերջին հրաժեշտը փակը քեզի, սիրելի՛ փոքրոր: Ներքէ՛ կըտ անգամուան մը համար չդիմենք քեզի, իբրեւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականի, այլ՝ իբրեւ հարազատի, որուն հետ գործելու բախարն ու պարիպը ունեցած ենք:

Մարմինդ պիպի հանգչի հոս, սակայն հոգիդ չի կրնար չաւառնիլ վերերը, բարչրէ՛ բը: Գուն որ բովանդակ կեանքդ «Բարչրացիր-բարչրացուր» նշանաբանին նուիրեցիր, հիմա, քիչ եպը, վա՛ղը, պիպի բլլաս բարչրերը փեղ մը, ուր կը գրկուիս արդէն երբեմնի գործակիցներդ՝ Ժիրայր Պոյաճեանը, Վարուժան Մուրաբեանը, Երուանդ Տէմիրճեանը, Յովհաննէս Տէր Յարութիւնեանը, Կարօ Թիրփինճեանը, Յարութիւն Գեղարդը եւ ուրիշներ: Գնա՛ ու բոլորին փոխանցէ՛ մեր ողջոյնները: Գնա՛՛ ու բոլորին բտ, քէ՛ դուր բացականեր չէք մեր կեանքէն, այլ՝ բանաւոր բացականեր էք, որովհետեւ չեք ներկայութիւնը մենք կը զգանք ու կ'ապրինք ամէն օր:

Գնա՛՛ եւ բտ, քէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ ու պիպի՛ շարունակէ հայութեան երթին պարբասարել նորանոր կամաւոր բանակներ, որոնք չեք նմաններուն ուղիով պիպի շարունակեն ընթանալ

Անասան ու անդէրէս,  
Գէպի յաղթանակ, յաղթանակ:

**FREDDY KARAGEUZIAN**

**"ONNIG OF CAIRO"**  
Egyptian Museum

Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: [freddy@gega.net](mailto:freddy@gega.net)



# ՀԱՒԱՏԱԻՈՐ ԵՒ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԵՂԲՕՐ ՄԸ ԿՈՐՈՒՍՏԸ

(ԵՂԲ. ՏՈՔԹ. ՄԻՍԱՔ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

## Միհրան Շիմշիրեանի ՊԷՅՐՈՒԹ

**Ա**նսպասելի մահուան հետ հաշտուելը իսկապէս զրժւար է, հակառակ այն ասացուածքին, թէ «Մահը իր ճամբով, կեանքը իր ճամբով»:

Տոքթ. Միսաք Արզումանեանի մահը կը նկատուի այդ անսպասելի մահերու շարքին:

Ամիս մը առաջ, երբ հեռաձայնով հեռը կը խօսէինք՝ լաւ տրամադրուած էր: «Մարզիկ»ին մէջ իր սկսած յօդուածաշարքին մասին խօսեցաւ եւ ըսաւ, թէ ունէր գրելիք բաւական բաներ, որոնց նօթերը արդէն պատրաստած էր:

Տոքթ. Արզումանեանի հետ մեր ծանօթութիւնը սկսաւ 1976ին, երբ միասին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ ընտրուեցանք: Մեր յարաբերութիւնները սկզբնական շրջանին այլքան ալ հեզասահ չընթացան: Ես Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկառուական շարքերու ընդհանուր խմբապետն էի, երբ Շրջանային Վարչութիւն ընտրուեցայ: Դիւանի կազմութենէն ետք, երբ խորհուրդներ, յանձնախումբեր պիտի նշանակէինք եւ երկամեայ մեր ծրագիրը պիտի մշակէինք, տոքթ. Արզումանեան ըսաւ. «Դո՛ւն Սկառու. Խորհուրդի մօտ մեր ներկայացուցիչը պիտի ըլլաս եւ, հետեւաբար, պիտի դադրիս ընդհանուր խմբապետի պաշտօնէն»:

Ինծի համար անհաճոյ անակնկալ էր դադրել խմբապետի պաշտօնէն: Այս կը նմանէր սպայի մը աստղերը ուսերէն հանելու որոշումին:

Հետագային, երբ սկսանք միասին աշխատել, նկատեցի որ տոքթ. Արզումանեան աւանդապաշտ, օրինապահ, ճշդապահ, բծախնդիր եւ կարգապահ անձ մըն էր: Մտիկ կ'ընէր իր խօսակիցը, կ'աշխատէր լաւ հասկնալ ըսուածները եւ ապա համադրել զանոնք:

Բաւական ժամանակ ետք, պատահեցաւ որ միասին



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ ըլլանք, 12 տարի, եւ հոն էր որ մեր յարաբերութիւնները սերտացան իրարու հետ: Տոքթ. Արզումանեան՝

- Լաւ ժողովական էր: Իր խօսքերը ուսումնասիրուած եւ հասկնալի կ'ըլլային:

- Լաւ ժողովակար էր. ժողովի մը մթնոլորտը արագ կ'ըմբռնէր եւ լաւագոյն ձեւով կը համադրէր արտայայտած կարծիքները:

- Լաւ բանախօս էր: Երբ բեմ բարձրանար, արդէն կը գգայիր թէ ունէր փոխանցելիք պատգամ մը, զոր անպայման կը դրոշմուէր մտքիդ մէջ:

- Անձերու իր արժեւորումը ընդհանրապէս առարկայական կ'ըլլար, դիտէր ամէն մէկուն չափը եւ անոր համաձայն կը ճշդէր իր յարաբերութիւնները:

- Անսահման կապուած էր Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին, կը հետեւէր միութենական գործի բոլոր մանրամասնութիւններուն եւ ապա կը դատէր:

- Իր մօտ ազգային ապրումները այնքան զօրաւոր էին, որ իր կեանքին ընթացքին Լիբանանի ազգային կեանքին մէջ գրեթէ մնայուն ներկայութիւն էր:

- Մշակոյթի մարդ էր: Ան հիմնադիրներէն մէկն էր Համազգայինի Պուրճ Համուտի մասնաճիւղին: Մտերմիկ խօսակցութեան մը ընթացքին ան արտայայտուած էր, որ իր նախասիրութիւնը գրականութիւնն էր, սակայն փայլուն ուսանող մը ըլլալով՝ գինք մղած էին բժշկութեան:

Տոքթ. Արզումանեանի մահով Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը կորսնցուց հաւատաւոր եւ արժանաւոր եղբայր մը, որ 1962էն մինչեւ 1999, իբրեւ պատասխանատու ծառայեց Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն եւ ազգային ու մշակութային բազմաթիւ մարմիններու:

Վստահ, որ մեր մտքերուն մէջ պիտի մնաս սիրելի տոքթոր: Վարձքը կատար, հողը թեթեւ գայ վրադ:



ԵՂԲ. ՏՈՔԹ. ՄԻՍԱՔ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ՈՉ ԵԻՍ Ի

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՅՍԻ-ԼՈՅՍԻ ՓԱՐՈՍ ՄԸ ԻՆԿԱԻ ԱՌԱՆՅ ՊԱՆԹԷՈՆԻ



Սամուէլ Մկրտիչեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Տ**խուր էր պահը: Օտար ճամբաներէն հայու դագաղ մը անցաւ յարգանքի գիրը ճակատին, բայց առանց պանթիկոնի:

Եղբայր տոքթ. Միսաք Արզումանեան Գաւառական Ժողովի քառասուն տարիներու ժապաւէնը կուրծքին, ազգային ծառայութեան երգն ու բերքը շալակին, Հ.Մ.Ը.Մ.Ի Շուշանածաղիկը լամբակին՝ հպարտ քայլերով անցաւ-գնաց այս աշխարհէն:

Յուզարկաւորութիւնն ու ազգային թաղումը կատարեց Գերաշնորհ Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ընթերցուեցաւ Մեծի Տանն Կիլիկոյ Արամ Ա. Կաթողիկոսին ցաւակցագիրը:

Հ.Մ.Ը.Մ.Ի սկստական շարքերը՝ արի-արեւոյշ, կարգապահ ու յարգալիբ հետեւեցան անոր դագաղին, յուզարկաւորութեան ամբողջ տեւողութեան: Հոն էր Հ.Մ.Ը.Մ.Ի սգաւոր ընտանիքը: Գերեզմանատան մուտքին, Հ.Մ.Ը.Մ.Ի-ական եղբայրներ դագաղը ուսամբարձ տարին մինչեւ վերջին օթեան: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան յանուն Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին լայնօրէն անդրադարձաւ եղբ. Արզումանեանի երկար տարիներու նուիրումին, հեղինակութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական մեծ վաստակին:

Ու հիմա, ո՛վ էր տոքթոր Միսաք Արզումանեան մարդը: Եղբ. Արզումանեանին ես հանդիպեցայ, եթէ չեմ սխալիր, 1964ին: Մեր առաջին հանդիպումին իսկ շատ լաւ տպաւորւեցայ իր պարզ, անկեղծ խօսքերէն եւ ազնիւ վերաբերմունքէն ու մանաւանդ՝ մտերմիկ զրոյցէն: Կարծես մենք երկար տարիներու բարեկամներ ըլլայինք: Ես չէի սխալած իմ գնահատանքիս մէջ, քանի այդ հանդիպումը խորիխը եղաւ միութենական կեանքի մեր հետագայ գործունէութեան, որ տեւեց աւելի քան 40 տարի: Անշուշտ, շատ բնական էր, որ այդ 40 տարիներու ընթացքին մենք ունենայինք անհասկացողութիւններ, միտքերու, համոզումներու տարակարծութիւններ, բայց հակառակ այդ բոլորին մեր կեցուածքները կը միա-

նային իրարու, երբ հարցը կը հասնէր Հ.Մ.Ը.Մ.Ի հետապնդած նպատակներուն յաջողութեան:

Հոս զանց պիտի չընեմ ըսելու, թէ բնութեան կողմէ մարդ անհատին տրուած «ես»ը երբեմն մարդուս գլխուն կը դառնայ անանուն փորձանք, բայց ուրախ եմ նշելու, որ եղբ. Միսաք Արզումանեան իր Հ.Մ.Ը.Մ.Ի-ական կեանքին երկար տարիներու ընթացքին մնաց հաւաքական խօսքի մարդ, կարգկանոնը, միութենական շահը գերադասող մարդ: Երբեք չփորձեց ըլլալ «ես»ով առաջնորդուող մարդ: Իրեն համար համեստութիւնը, խոհեմութիւնը միշտ ալ եղան նախամեծար: Քիչ էտք, երբ աւելի մօտէն ծանօթացանք այս մարդուն նկարագրին, այն ատեն աւելի լաւ կը տեսնեք իր հոգիին համեստութիւնը, խոհեմութիւնն ու լրջութիւնը, որոնք երբեմն մտերմութեան կը մօտենան, եւ հաւանաբար նկարագրի այդ գիծերն ալ կ'ընդունէին, որ ան միշտ մնայ ատենապետի պաշտօնին վրայ:

Եղբ. Միսաք Արզումանեան մանուկ թէ պատանի տարիքին Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերը չէ գտնուած: Իր նկարագրին խմորումը Հ.Մ.Ը.Մ.Ի դաստիարակչական դպրոցէն չէ առած, այլ՝ ներշնչուած է ընտանիքէն եւ շրջապատէն, որոնք իր աշխատասիրութեանէն քաջալերուած՝ զինք համալսարան դրկած են, ճիւղերէն շարունակելու բժշկական ուսումը:

Այս համեստ նկարագրի տէր մարդը՝ եղբ. Միսաք Արզումանեանը կարծես նախաինամութեան կողմէ առաքուած էր Հ.Մ.Ը.Մ.Ի-ին ծառայելու եւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին իր հոգեկան գոհունակութիւնը առնելու: Ան երկու տարի կը գործէ Պուրճ Համուտի մասնաճիւղի շարքերուն մէջ: Կարծես այդ երկու տարիները իրեն համար կ'ըլլան փորձառական տարիներ: Յետոյ, առանց դադարի, Հ.Մ.Ը.Մ.Ի աշխատանքին դաշտերը կը բացուին այս եռանդուն երիտասարդին առջեւ եւ ան յաջորդաբար կ'ըլլայ Պուրճ Համուտի մասնաճիւղի ատենապետ, Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ, ատենապետ, քանի մը տարի շարունակ եւ, վերջապէս, երեք քառամեակ՝ 12 տարի Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ: Ուրեմն, եղբ. Արզումանեան ամբողջ երեսունեօթը տարի անդադար կը ծառայէ Հ.Մ.Ը.Մ.Ի ազգանուէր տեսլականին, առանց յոգնելու, սիրով եւ միշտ պատրաստ ամբողջական նուիրումի,



որովհետեւ Հ.Մ.Լ.Մ.ը դարձած էր եղբ. Արզումանեան մարդուն ապրումներուն գլխաւոր տրոփը, հոգիին առանցքը, առօրեայ կեանքին երգն ու բերքը: Առանց Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքին եղբ. Արզումանեանի հոգին չէր լիցքաւորուէր: Հոս գանց չընենք Պուրճ Համուտի քաղաքապետարանի իր դարմանատունը, ուր Աստուծոյ օրը քանի մը Հ.Մ.Լ.Մ.ական եղբայրներ պիտի այցելէին եղբայր տըթորին, իրենց Հ.Մ.Լ.Մ.ական հարցերուն, վէճերուն լուծում մը գտնելու համար: Կը պատահէր, որ ան քաղաքապետարանի հիւանդը մոռցած՝ միութենական հարցի մը լուծումով զբաղէր: Արդարացի էր քաղաքապետարանի առողջապահական բաժնի տնօրէն Հաննա Հատտատը, երբ կ'ակնարկէր ըսելով թէ հոս քաղաքապետարանի դարմանատուն չէ, հոս Հ.Մ.Լ.Մ.ի ակումբ է, Հ.Մ.Լ.Մ.ի դատարան է, ու պահանջեալ հարկին՝ Հ.Մ.Լ.Մ.ի հանգստարան: Շատ ճիշդ էր այդ մարդը, որ նաեւ շատ կը յարգէր եղբ. Արզումանեանը եւ հայերը:

Նաեւ, պէտք է նկատի ունենալ, որ եղբ. Արզումանեան լաւապէս ուսումնասիրած եւ արժեւորած էր ընտանիք եւ Հ.Մ.Լ.Մ. երկու կենսական հասկացողութիւնները եւ ամէն մէկուն տուած էր իր իրաւունքին արդար բաժինը:

Նաեւ չկարծենք, որ եղբ. Արզումանեան պահանջեալ հարկին չէր գիտեր ընդվզիլ ու մէկ կողմ քաշուիլ: Բայց նաեւ շուտ կ'անդրադառնար դէպքին: Շուտ կը մոռնար եղածը եւ նոյնիսկ պէտք չէր մնար միջնորդելու: Կը բաւէր որ յիշեցը-

նէին, թէ իր բացակայութիւնը կրնար վնասել միութեան աշխատանքներուն եւ վերելքին: Իսկ երբ հարազատներ հարցը թեթեւցնէին՝ ան պատրաստ կ'ըլլար ընդառաջելու աշխատանքին: Այդպէս էր եղբ. Արզումանեանը՝ Հ.Մ.Լ.Մ.ը պէտք չէ վնասէր:

Ու հիմա կ'արժէ եղբ. Արզումանեանի Հ.Մ.Լ.Մ.ական կեանքի շուրջ չորս տասնամեակներուն աչք մը նետել՝ անվարան հաստատելու համար, որ եղբ. Արզումանեան եղաւ հոն ուր որ պէտք էր: Միայն ժողովներով չզոհացաւ, այլ գնաց հոն՝ ուր քանի մը հայ կար: Հոն ուր իր խօսքին պէտքը կար: Գնաց՝ սիրտ տուաւ: Գնաց՝ հայութիւն քարոզեց, ու իր պերճախօս լեզուով, իր ջերմիկ խօսքերով, գրաւիչ բառերով մօտեցաւ մարդոց, Հ.Մ.Լ.Մ.ը տարաւ Հայաստան ու Հայաստանէն մինչեւ գաղթաշխարհի լայնածիր ամիերը. ամէնուրեք ան Հ.Մ.Լ.Մ. սերմանեց: Խնդրեց, պահանջեց՝ հայ մնացէք:

Եղբ. Արզումանեան 37 տարի անսակարկ նուիրումով ու հաւատքով առլի քայլեց Հ.Մ.Լ.Մ.ի տեսլականին ճամբուն վրայ: Քայլեց իբրեւ զրօշակիր: Սա հաւատքի մեծ կամք էր, զոհողութիւն էր:

Եղբ. Արզումանեան իր այսքան արժանիքներով արժանի է մեր երրորդութեան՝ Նշան Թիւսիւզեանի, Լուտեր Մասպանաճեանի եւ Յովհաննէս Շահինեանի կողքին իր տեղը ունենալու:

Վարձքը կատար եւ երթո՞ք բարի եղբ. Արզումանեան:



**Maison Mere**  
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt  
Tel: (202) 3913296 - 3918542  
Fax: (202) 3903899

**Ramses Hilton**  
Tel: (202) 5758000 - 5744400  
Direct: (202) 5751790

**Zamalek**  
11 Hassan Sabry st., Degla center  
Tel: (202) 3322121 - 3322130  
Fax: (202) 3322130

**VARTAN KAZANDJIAN**

**KAZANDJIAN**

E-mail: vartan@intouch.com

**Joillier-Orfevre Fonde en 1920**





Մարտ Բէշիշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼՆՍ

**Շ**աբաթ, 30 Յունիսին, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը հրաժեշտ տուաւ միութեան Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝ եղբորտղթ՝ Միաբ Արզումանեանին, որ իր մահականացուն կնքեց Չորեքշաբթի, 27 Յունիս 2007ին, սրտի կաթուածի հետեւանքով:

Եղբ. Արզումանեանի մահով ոչ միայն Արզումանեան գերդաստանը կորսնցուց օրինակելի ամուսին մը եւ գուրգուրոտ հայր մը, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ը կորսնցուց վաստակաշատ ղեկավար մը, իսկ լիբանանահայութիւնը՝ ազգանուէր հայորդի մը, որ մեծ ներդրում ունեցած է Հ.Մ.Ը.Մ-ի, Լիբանանի թեմական կառույցներուն, Համազգայինի եւ ազգային բազմաթիւ հաստատութիւններու մէջ:



# ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆ

-Հ.Մ.Ը.Մ-ի ԿԵԴՐՈՆԱ

Վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական ղեկավարին յուղարկւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ազգային թաղումին նախագահեց Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որուն սպասարկեց Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւ՝ Վահան Քհնյ. Կոստանեան:

Հանգուցեալին դագաղը եկեղեցի առաջնորդուեցաւ ժամը 11.30ին: Եկեղեցւոյ մուտքին եւ ներսը, Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆրանսիսքոյի «Անի» եւ «Կարս» մասնաճիւղերու արի-արենոյշները, գլխաւորութեամբ Շրջանային Սկաուտական Խորհուրդին, բարեւի կանգնած դիմաւորեցին եւ պատուոյ պահակի դերը կատարեցին ամբողջ արարողութեան ընթացքին:

Բերնէ բերան լեցուն էր եկեղեցին, ուր իրենց վերջին յարգանքի տուրքը տալու փութացած էին Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի ներկայացուցիչները: Լիբանանէն նոր ժամանած Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտչեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մհեր Դաւիթեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան եւ Շրջանային Վարչութեան այլ անդամ-անդամուհիներ, Սան Ֆրանսիսքոյի, Սանթա Գլարայի «Անի» եւ Ուոլնաթ Քրի-





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՊԵՏ ԵՂԲ. ՄԻՍԱՔ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆԻ

**ԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԵՕԹՆՕՐԵԱՅ ՍՈՒԳ**

քի «Կարս» մասնաճիւղերու վարչական կազմերը, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ, տեղւոյն պատկան մարմիններու եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ընտանեկան պարագաներ եւ հարազատներ:

Ազգային թաղումի արարողութենէն ետք, հանգուցեալին կենսազրական գիծերը ընթերցեց Վահան ՔՆՆյ. Կոստանեան:

Քահանայ Հայրը ընթերցեց նաեւ Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ Բարգէն Եպս. Չարեանի ցաւակցական հեռագիրը:

Սեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառին ցաւակցազիրը ընթերցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ապա, Սրբազան Հայրը փոխանցեց իր ցաւակցութիւնները, առաջին հերթին խնդրելով Աստուծոյ, որ ուղեկից ըլլայ հանգուցեալին:

«Մեր ամբողջ ազգը սգաւոր է, որովհետեւ ազգային պատուական անձնաւորութիւն մը, լիբանանահայ գաղութի ազգային, եկեղեցական, կրթական, մարզական, բարեսիրական հանրաժանօք եւ վաստակաշատ ազգային մը, Հ.Մ.Ը.Մ.ի տիտան մը, Սփիւռքի նուիրեալ ծառայ մը ու առաքեալ մը իր մահկանացուն կնքած է, եւ ազգային այս թաղումով մենք եկած ենք խոնարհելու իր յիշատակին առջեւ, երախտագիտութեամբ շնորհակալութիւն յայտնելու իր

ծառայական կեանքին ու վաստակին եւ հաւատարմութեան մեր ուխտը վերանորոգելու իր աւանդին դիմաց», ըսաւ Առաջնորդը:

Ապա, եղբ. Արզումանեանի կատարած ծառայութիւնները գնահատելով ան ըսաւ. «Այսօր, ազգային այս թաղումով կը խոնարհիմք իր յիշատակին առջեւ եւ իբրեւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ, իբրեւ մէկ միաւորը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համագգային առաքելութեան, յայտարարած ենք ազգային թաղում: Բայց ես վստահ եմ՝ նոյնքան եւ աւելի, մեր սփիւռքեան թեմերը այսօր սուգի մէջ են, որովհետեւ այս դաժողիկ մէջ հանգչող անձնաւորութեան անմահ հոգին կը սաւառնի իւրաքանչիւրիս յիշողութեան վերեւ եւ անպայմանօրէն երանական հանգիստ մը կը գտնէ: Սփիւռքեան մեր բոլոր թեմերը, հայրենիքը եւ Արցախը վկաներն են իր ծառայութեան, նուիրումին եւ առաքելութեան»:

Ապա, հանգուցեալին մեծահոգի ըլլալու բացառիկ յատկութիւնը շեշտելով, Սրբազանը ըսաւ. «Տոքք. Միսաք Արզումանեան կը պատկանի այն սերունդին, որ մեր ազգի վերընձիւղման մթնոլորտին մէջ, հայակերտումի, հոգեկերտումի, ազգակերտումի, մարմնակերտումի նշմարիտ առաքե-



լուքեան մէջ սրբազան գործի եւ ծառայութեան ուսուցիչները եղաւ եւ միշտ պատմեցի վրայ մնաց իր սկզբունքով, իր պատասխանատուութեամբ եւ բարձր գիտակցութեամբ: Անոր համար ալ, ինչպէս պատմութեան մէջ արքաներ եւ թագաւորներ կոչուած են առիւծասիրտ, մեծ սիրտ ունեցող, ես սա պահուն յանուն ազգին կ'ուզեմ յայտարարել, որ տոքթ. Միսաք Արզումանեան մեծ սիրտ ունեցող հայորդի մը եղաւ եւ այդպէս կը մնայ մեր յիշողութեան մէջ»:



**Յուզարկաւորութեան արարողութեան հոգեւորականները, հանգուցեալին դազալը սգակիրներու թափօրով տարուեցաւ տեղւոյն «Սայփրա» գերեզմանատունը, ուր արարողութիւնը կատարեցին Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ Աւետիս Քհնյ. Թորոսեան, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հովիւ Վահան Քհնյ. Կոստանեան եւ Գուփրթիմոյի Ս. Անդրէաս Եկեղեցւոյ հովիւ Տաթև Քհնյ. Յարութիւնեան: Յուզարկաւորութեան եւ թաղման զոյգ արարողութեանց մասնակցեցաւ Սան Ֆրանսիսքոյի Աւետարանական Գողգոթայ Եկեղեցւոյ հովիւ՝ պատուելի Ներսէս Պալապանեան:**

Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած մեծ ընտանիքին անունով դամբանական արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ եղբ. Արզումանեանի կորուստը անհաստատելի գանելով ըսաւ. «Բոլորս, անխորհրդ քուրս, պիտի փնտռենք Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարի քուրսը, փայլուն բեմասացը, պատկառելի ժողովակար եւ խստապահանջ պատասխանատուն: Ան, որուն գիտակցական ողջ կեանքը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի համբով հայութեան եւ Հայաստանի անապարհ ցուրտներում» Պուրն Համուտեմ միջեւ սփիւռեան հեռաւոր ուստաններ ու միջեւ Մայր Հայրենիք՝ Հայաստան»:

Այնուհետեւ, տոքթ. Արզումանեանի երկարամեայ ծառայութիւններուն անդրադառնալով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ «Եղբ. Արզումանեան եղաւ ու մնաց Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան մեծ սպասարկու մը եւ հայ ժողովուրդի տեղեկներուն անշահախնդիր ցուրտեալ մը: Իր ներկայութիւնը յարգանք կը պարտադրէր բոլորին, իսկ խօսքը՝ կը ներկայացներ անվիճելի հեղինակութիւն: Օրինապահ եւ ճշդապահ մարդ էր ան: Արդարամիտ ու լայնախոհ կեցւածքներու տէր: Անոր համար ալ իր կարծիքը միշտ փնտրուած էր, իր տեսակետը՝ միշտ յարգուած ու համոզիչ էր: ...Եղբ. Արզումանեան աւանդապահ մարդ էր: Միջեւ իր կեանքին վերջալոյսը ան ամբօրէն կառչած մնաց այն բոլոր սկզբունքներուն եւ աւանդութիւններուն, որոնք մեր ազգը ազգ կը պահեն, իսկ Հ.Մ.Ը.Մ.ը՝ Հ.Մ.Ը.Մ.» (Խօսքին

ամբողջութիւնը տեսնել էջ 3-4):

Թաղման արարողութեան հոգեւորականները, դազալին վրայ զրուած Հ.Մ.Ը.Մ.ի զրօշը սկսուածներուն կողմէ ծալուեցաւ եւ յանձնուեցաւ Երջանային Ընդհանուր Խմբապետ եղբ. Հրայր Պոյաճեանին: Եղբայրը զրօշը փոխանցեց Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանին, որ իր կարգին, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի ընկերակցութեամբ զայն յանձնեց հանգուցեալին այրիին՝ Ժագլին Արզումանեանին:

Մինչ ներկաները ծաղիկներ եւ հող կը թափէին դազալին վրայ, արարողութեան ներկայ արի-արեւոյշները երգեցին «Յառաջ նահատակ» քայլերգը:

Թաղման արարողութեան հոգեւորական մասնակցուեցաւ տեղւոյն Աւետարանական Գողգոթայ Եկեղեցւոյ սրահը: Հոգեւորական ընթացքին իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Վարչութեան անունով՝ եղբ. Րաֆֆի Սաչատուրեան, Համազգայինի Կեդրոնական վարչութեան անունով՝ Եղուարդ Մսրրիան, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ հիւսիսային Ամերիկայի երեք մասնաճիւղերուն անունով՝ եղբ. Սազո Երիգեան, Սան Ֆրանսիսքոյի Աւետարանական Համայնքի անունով՝ պատուելի Ներսէս Պալապանեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սանթրա Գլաբայի «Անի» մասնաճիւղին անունով՝ եղբ. Վահէ Պարոնեան, Հ.Մ.Ը.Մ.ի Ուոշինգթոն Գրիքի «Կարս» մասնաճիւղին անունով՝ քոյր Արմինէ Ժամկոչեան, հանգուցեալին ընկերներէն՝ եղբ. Սամուէլ Մկրտիչեան եւ ուրիշներ:

Կարգացուեցաւ նաեւ Կեդրոնական վարչութեան նախկին փոխ ատենապետ, տոքթ. Արզումանեանի գործակից՝ եղբ. Վարուժան Սերոբեանի ցաւակցազիրը:

Սգակիրները մեկնեցան տուն, իրենց մտքերուն մէջ դրոշմած պահելով եղբ. Միսաք Արզումանեանի միութեանական, ազգային ու մարդկային տիպարը, որ օրինակ պիտի ծառայէ գալիք սերունդներուն:



# ՑԱՒԱԿՑԱԳԻՐՆԵՐ

Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ,

Ցառով լսեցինք եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի մահւան տխուր լուրը: Իր մահը զգալի կորուստ մըն է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, որովհետեւ ան կաղնի մըն էր, որ տարիներ շարունակ իր թանկագին ժամանակը նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հայ երիտասարդութեան ու հայապահպանման:

Իր մարմինը կը յանձնենք հողին, սակայն իր տարած գործն ու յիշատակները անմահ կը մնան Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան տոմարներուն մէջ:

Աստուած հոգին լուսաւորէ:

*Սիպոնի, Աւարայիս*  
**ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ**

\*\*\*

Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիք,

Սրտի խոր կսկիծով տեղեկացայ եղբ. Միսաք Արզումանեանի մահուան լուրը:

Ծանր է մեր բոլորիս կորուստը, քանզի տոքթ. Արզումանեանը Հ.Մ.Ը.Մ.ի հիմնաւոր սիրներից մէկն էր: Մեծերի կորուստը հարստացնում է պատմութիւնը: Եղբ. Միսաք Արզումանեանը Հ.Մ.Ը.Մ.ի ՄԵԾԵՐԻՑ էր: Մեր սիրելի միութեան պատմութիւնը հարստացաւ եղբ. Միսաքով, բայց նաեւ իրականութիւնը դատարկուեց նրանով: Տոքթոր Արզումանեանի բացակայութիւնը մենք դեռ շատ երկար կը զգանք, սակայն պէտք է մխիթարուենք նրանով, որ մեր միութիւնը ունեցել է Միսաք Արզումանեանի նման նուիրեալ անդամ եւ ղեկավար:

Փառք ու պատիւ նրա անցած ուղուն: Աստուած հոգին լուսաւորի:

*Երեւան, Հայաստան*  
**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

\*\*\*

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի մեծ ընտանիքին եւ իմ անունով խորազգաց ցաւակցութիւններ կը յայտնմ եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի տիկնոջ եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

Կը սգանք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ կորուստը: Թող Աստուած լոյսերու մէջ յաւերժացնէ այս պատուական հայորդիին եւ Հ.Մ.Ը.Մ.ականին յիշատակը:

*Մոնթրէալ, Գանադա*  
**ՀՐԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ**

\*\*\*

Սիրելի եղբայրներ,

Իմ ցաւակցութիւններս կը փոխանցեմ տիկին Արզումանեանին, եղբ. Արզումանեանի ընտանեկան պարագաներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյր-եղբայրներուն:

Հողը թեթեւ գայ վրան:

*Փարիզ, Ֆրանսա*  
**ԼԵՒՈՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ**



Սգակիր Արզումանեան ընտանիք,

Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարզիկ» ամսաթերթը իր խմբագրական եւ վարչական կազմերով խորապէս կը սգայ միութեան վաստակաշատ նախկին ատենապետին եւ թերթին հաւատաւոր աշխատակիցին տոքթ. Միսաք Արզումանեանին մահը:

Տոքթ. Արզումանեան խօսքով, գրիչով ու գործով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան անխոնջ նուիրեալ մըն էր, որուն յիշատակը միշտ վառ պիտի մնայ զինք ճանչցողներուն մօտ: Իր կորուստով մեր միութիւնն ու ժողովուրդը կը կորսնցնեն անկրկնելի ղեկավար մը, փայլուն հետտոր մը եւ հեղինակաւոր մարդ մը, որուն անսահման ծառայութիւնները սփիւռեան մեր կեանքի կարեւոր մէկ հանգրուանին լուսաւոր էջը կը կազմեն:

Աստուած հոգին լուսաւորէ, հարազատները մխիթարէ եւ զինք արժանացնէ Հ.Մ.Ը.Մ.ի անմահներու պանթէոնին, կողքին այն մեծերուն, որոնք մեզի տուին հայ ինքնութեան նկարագիրը եւ Հ.Մ.Ը.Մ.ական մարդու պայծառ դիմագիծը:

*Պէյրուս, Լիբանան*  
**ՎԻԳԷՆ ԱՒԱԳԵԱՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,

Սիրելի սգակիր վարչական եղբայրներ,

Խոր կսկիծով տեղեկացայ եղբայր տոքթ. Միսաք Արզումանեանի անժամանակ մահուան տխուր լուրը:


Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական մեծ ընտանիքը կը կորսնցնէ հաւատաւոր միութեանական մը, կը կորսնցնէ վաստակաւոր վարչական մը եւ կը կորսնցնէ ժամանակակից սերունդի նուիրեալներէն մէկը:

Եղբայր Միսաքի վաստակաշատ քառասուն տարիներ երկարող միութեանական եւ նաեւ Լիբանանի Ազգային իշխանութեան իր ծառայութիւնները, գաղափարական հաս-



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

# ՄԱՐԴԸ, ՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԵՐՏԵՑ



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունն նախկին ատենապետ՝ եղբ. Միսաք Արզումանեանի մահով սփիռքահայ հանրային-հասարակական կեանքը կորսնցուց յետ-եղեռնեան սերունդի հալածատուր դէմքերէն մէկը, որուն բովանդակ կեանքը Հ.Մ.Ը.Մ.ին եւ ազգային մեր կառոյցներուն ճամբով անսակարկ նուիրաբերում մը եղաւ հայակերտման եւ հայապահպանման նուիրական գործին:

Եղբ. Արզումանեան սրտի կաթուածի հետեւանքով մահացաւ 27 Յունիս 2007ին, Սան Խոսէի մէջ, Արեւմտեան Մ. Նահանգներ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Եղբ. Միսաք Արզումանեան ծնած է 1931ին, Պէյրութ: Միջնակարգ իր ուսումը ան ստացած է Սէն Կրէկուար քոլէճին մէջ, իսկ երկրորդականը՝ ժեպուիթներու մօտ: Ապա բժշկութիւն ուսանած է Պէյրութի Սէն ժոզէֆ համալսարանին մէջ:

1958ին, Լիբանանի քաղաքական տագնապի օրերուն, մեկնած է Ամման, ուր մինչեւ 1961 աշխատած է իբրեւ բանակի բժիշկ, սպայի աստիճանով: Իր աշխատանքին առ ի գնահատանք՝ Հիւսէյն թագաւորին կողմէ ան արժանացած է «Անկախութեան կարգի» շքանշանին:

Այդ շրջանին ան ամուսնացած է Ժազլին Պատաճեանին հետ եւ բախտաւորուած է երկու զաւակով՝ Վազգէն եւ Կարէն:

1961ին եղբ. Արզումանեան վերադարձած է Լիբանան, ուր բոլորած է ազգային-հասարակական կեանքի ծառայութեան աւելի քան 35 տարիներ:

1999ին ան վերջնականապէս հաստատուած է Արեւմտեան Միացեալ Նահանգներ: Նոյն տարին, առ ի գնահատանք իր երկարամեայ ծառայութիւններուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով ան արժանացած է միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Ա. Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Եղբ. Միսաք Արզումանեանի Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հայութեան նուիրաբերումի երթը կարելի է ներկայացնել գլխաւոր հետեւեալ հանգրուաններով.-

1962-1964, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան ատենապետ:

1964-1974, Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան Բ. ատենապետ:

1974-1978 եւ 1980-1982, Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ:

1987-1999, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ:

1965էն ի վեր ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի ու ապա՝ Պատգամաւորական բոլոր ժողովներուն: Բացակայած է միայն վերջինէն:

կացողութիւնները, վարչական ու ժողովավարական փորձառութիւնը մեզի կը ձգեն անմոռանալի յուշեր:

Վարձքդ կատար եղբայր Արզումանեան:

Այս տխուր իրականութեան առջեւ կը խնդրեմ ձեզմէ իմ վշտակցութիւնս փոխանցէք հանգուցեալ եղբոր ազնի տիկնոջ եւ հարազատներուն:

Ընդունեցէք խորազգաց ցաւակցութիւններս:

Աստուած հոգին լուսաւորէ:

*Մոնթրէալ, Գանաբա*  
**ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵՐՈՒԲԵԱՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ վշտակիր Արզումանեան ընտանիքին,

Անհուն կսկիծով իմացանք երկար տարիներու մեր գործակիցին՝ տոքթ. Միսաք Արզումանեանի մահուան բօթը:

Այս առիթով բաժնեկից կը դառնանք Արզումանեան ընտանիքին եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ կառոյցի բոլոր միատրներու

սուգին, մաղբելով որ Աստուած համբերութիւն եւ մխիթարութիւն տայ ձեզի:

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի՛ տոքթոր:

*Պէյրութ, Լիբանան*  
**ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ**

\*\*\*

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Պէյրութ,

Անակնկալ կորուստ մը եւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի հաւատաւոր դէմքերէն եղբ. Միսաք Արզումանեանը:

Խոր ցաւով եւ մեծ կսկիծով իմացայ երբեմնի խոհեմ ու խորիմաց ատենապետիս մահուան բօթը, բայց իր յիշատակը վստահ եմ որ անմառ պիտի մնայ սրտիս մէջ, ինչպէս նաեւ՝ զինք ճանչցած եւ մանաւանդ իր հետ աշխատակցած Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն հոգւոյն մէջ:

Իմ խորազգաց ցաւակցութիւններս կը յայտնեմ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Արզումանեան ըն-

# ԵՒ... ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆՑԱԻ

1990ին եղբ. Արզումանեան գլխաւորած է Հայաստանի մէջ Հ. Մ. Ը. Մ. ը վերականգնելու առաքելութեամբ Կեդրոնական Վարչութեան հայրենիք առաքած եռանդամ պատուիրակութիւնը:

Կապակերպչական, ժողովական եւ պատգամախօսական պարտականութիւններով ան բազմիցս այցելած է Հ. Մ. Ը. Մ. ի մեծ ընտանիքը բաղկացնող շրջանները՝ Յունաստան, Արժանթին, Ուրուկուէյ, Միացեալ Նահանգներ, Գանատա, Եգիպտոս, Քուէյթ, Սուրիա, Աւստրալիա, Հայաստան, Լոնտոն եւ Փարիզ:

## Բ. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԾԱՌ-ԱՅՈՒԹԻՒՆԸ

Եղբ. Միսաք Արզումանեան ունի Լիբանանի ազգային թեմական իշխանութեան ծառայութեան երախտարժան վաստակ, զոր կարելի է ներկայացընել հետեւեալ ամփոփ տողերով.-

1950ականներու սկիզբ, հոգաբարձու Պուրճ Համուտի Ազգային Արգարեան եւ Կիլիկեան վարժարաններու:

1964-1978, խնամակալ Պուրճ Համուտի Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի:

Երկու շրջան ատենապետ Ազգային իշխանութեան Ուսումնական Խորհուրդի:

1966-1968, անդամ՝ Լիբանանի թեմի Ազգային Քաղաքական Ժողովի, հետագային նոյն Ժողովի ատենապետ՝ երկու շրջան: Միաժամանակ ատենապետ՝ թեմի Վերաքննիչ Ատենանիս:

1962էն մինչեւ 1999, 37 տարի անընդմէջ, Լիբանանի Ազգային Գաւառական Ժողովի անդամ:

## Գ. ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ ԱՅՆ ՄԱՐԶԵՐԸ

Եղբ. Միսաք Արզումանեանի ազգային հանրանուէր ծառայութեան դաշտը կ'ընդգրկէ նաեւ այլ մարզեր: Այսպէս,

1952ին ան մասնակցած է Համազգայինի Պուրճ Համուտի մասնաճիւղի հիմնադիր ժողովին եւ անդամ ընտրուած է անոր անդրանիկ վարչութեան:

Երկու տարի մաս կազմած է Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբին եւ Լեւոն Շանթի «Շղթայուած»ին մէջ ստանձնած է դեր:

1963ին ընտրուած է Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդի անդամ: Ապա 1967-1997 վարած է նոյն հաստատութեան առողջապահական բաժնիի պատասխանատու բժիշկի պաշտօնը:

1968-1970 մաս կազմած է Պուրճ Համուտի ծերանոց-կուրանոցի խնամակալութեան:

Լիբանանեան պատերազմի դժուարին օրերուն, 7 տարի վարած է Ալունիէի Ազգային Բուժարանի խնամակալութեան ատենապետութիւնը:

1990-1999, ան ատենապետը եղած է Հայաստանի երկրաշարժէն ետք ստեղծուած Լիբանանահայ Օգնութեան Մարմինին:

1995ին ան ատենապետը եղած է Հայկական Յեղասպանութեան 80ամեակի Ոգեկոչման Լիբանանահայ Կեդրոնական Մարմինին:

տանիքի բոլոր անդամներուն եւ Լիբանանի ազգային իշխանութեան:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:  
*Թորոնթօ, Գանադա*  
**ՄԱՆՈՒԷԼ ՀԱԼԼԱԳԵԱՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեանը Սիրելի եղբայրներ,  
Մեզ հասաւ եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի մահուան գոյժը:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կենտրոնական Վարչութիւնը յայտնում է իր խորին ցաւակցութիւնը եղբ. Միսաքի հարազատներին եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Եղբայրական բարեկերպ  
Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.Ի  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Սիրելի եղբայրներ,  
Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը մեծ կսկիծով ստացաւ եղբայր տոքթ. Միսաք Արզումանեանի մահուան տխուր լուրը:

Վաստակաշատ եղբօր յիշատակը անմահ կը մնայ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու սրտերուն մէջ:

Տէրը Իր Սուրբ Հոգիով մխիթարէ ձեզ, հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ արժանացնէ յախտեանական կեանքի:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՉԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Պէյրութ, Լիբանան,  
Յարգելի եղբայրներ,  
Խոր ցաւով ստացանք տխուր լուրը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-



կան Վարչութեան նախկին ատենապետ՝ եղբ. Միսաք Արգումանեանի մահուան:

Յանուն Հ.Մ.Բ.Մ.ի Քանատայի Շրջանային Վարչութեան եւ անելի քան 1600 անդամներուն, կու գանք մեր խորին ցաւակցութիւնները յայտնելու ձեզի եւ ողբացեալ եղբոր հարազատներուն:

Եղբ. Արգումանեանին մահը մեծ կորուստ է Հ.Մ.Բ.Մ.ի ընտանիքին:

Կը մաղթենք որ Աստուած ննջեցեալին հոգին լուսաւորէ եւ իր հարազատներուն մխիթարութիւն պարգեւէ:

**Հ.Մ.Բ.Մ.Ի ՔԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Բ.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը, հինգ մասնաճիւղերու վարչութիւնները, բոլոր անդամ-անդամուհիները, խոր յուզումով կը սգան մահը վաստակաշատ հատաւոր Հ.Մ.Բ.Մ.ականին, Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետին՝ եղբ. տոքթ. Միսաք Արգումանեանին: Այս տխուր առիթով խորազգաց ցաւակցութիւն կը յայտնեն Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, հանգուցեալ եղբոր տիկնոջ՝ Ժազլինին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:

Ի՞նչ յարգանք միութեանական ու ազգային երկարամեայ իր վաստակին:

**Հ.Մ.Բ.Մ.Ի ԱՒՏՐԱՎԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Յարգելի եղբայրներ,

Հ.Մ.Բ.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը, իր մասնաճիւղերու վարչութիւնները, Շրջանային Սկաութական Խորհուրդը, իր մասնաճիւղերու խորհուրդները եւ Հ.Մ.Բ.Մ.ական քոյրերն ու եղբայրները խորին ցաւակցութիւններ կը յայտնեն Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկարամեայ վաստակաւոր նախկին ատենապետ՝ եղբ. Միսաք Արգումանեանի մահուան տխուր առիթով:

**Հ.Մ.Բ.Մ.Ի ՅՈՒՆԱՏԱՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**



\*\*\*

Սիրելի եղբայրներ, Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի վարչութիւնը ցաւակցութիւններ կը փոխանցէ եղբ. Միսաք Արգումանեանի ընտանեկան պարագաներուն եւ միութեան մեծ ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ:

**Հ.Մ.Բ.Մ. -Հ.Ե.Մ.Ի ԿԻՊՐՈՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Յարգելի Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Սիրելի եղբայրներ, Մասնաճիւղիս վարչութեան եւ բոլոր անդամների կողմից այսու գալիս ենք յայտնելու մեր խորին ցաւակցութիւնները եղբ. տոքթ. Միսաք Արգումանեանի ցաւալի մահուան առիթով:

Աստուած հոգին լուսաւորի:

**Հ.Մ.Բ.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Սգակիր եղբայրներ, Հ.Մ.Բ.Մ.-Ֆրանսի Մեկուսի վարչութիւնը սրտի խոր վիշտով իմացաւ մահուան գոյժը վաստակաշատ Հ.Մ.Բ.Մ.ական, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ ու ատենապետ եղբ. տոքթ. Միսաք Արգումանեանի:

Հ.Մ.Բ.Մ.-Ֆրանսի Մեկուսի վարչութիւնն ու անդամները իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

**Հ.Մ.Բ.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Սգակիր եղբայրներ,

Խոր ցաւով իմացանք եղբ. տոքթ. Միսաք Արգումանեանի մահուան լուրը: Այս տխուր առիթով Հ.Մ.Բ.Մ.ի Վիեննայի մասնաճիւղի եւ վարչութեան անունով մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Բ.Մ.ի ընտանիքին, մաղթելով որ Աստուած հոգին լուսաւորէ եւ լոյսերու մէջ հանգչեցնէ:

**Հ.Մ.Բ.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Յարգելի եղբայրներ,

Հ.Մ.Բ.Մ.ի Ալմէլոյի մասնաճիւղին կողմէ մեր խորազգաց ցաւակցութիւնները կը փոխանցենք Արգումանեան ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ:

**Հ.Մ.Բ.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն, Պէյրութ, Լիբանան, Սիրելի եղբայրներ, Շրջանիս Հ.Մ.Բ.Մ.ի վարչութեան եւ մասնաճիւղիս հա-



մայն անդամներուն անունով կու գանք յայտնելու մեր ցաւակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ կորուստին:

Եղբ. Միսաք Արզումանեանի մահուան տխուր առթիւ կը խնդրենք մխիթարութիւն իր պարագաներուն եւ աղօթք իր լուսաւորեալ հոգիին: Աստուած հոգին լուսաւորէ:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՍԱԿԷՍԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Յարգելի անդամներ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,

Յանուն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան եւ

անդամներուն, մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին՝ վաստակաշատ եւ երկարամեայ նուիրեալ, Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի անժամանակ մահուան տխուր առթիւ:

Թող Աստուած հոգին լուսաւորէ:

Մխիթարանք ձեզի, ողբացեալին ընտանիքին եւ համայն Հ.Մ.Ը.Մ.ին:

**ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, Յատվ ստացանք եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի մահուան լուրը:

Յանուն Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամբ»ի, մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք եղբ. Արզումանեանի ընտանիքին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Կորուստը մեծ է, բայց Աստուծոյ կամբն է:

Աստուած հոգին լուսաւորէ:

**ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄԲ»Ի ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**BDF ••••**


**SUD S.A.L.** AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10



\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,  
Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի վարչութիւնը միութեան ընդհա-  
նուր ընտանիքին կը փոխանցէ իր ցաւակցութիւնները:  
Աստուած հոգին լուսաւորէ:  
Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,  
Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանի-  
քին կը փոխանցէ ցաւակցութիւնները:  
Աստուած հոգին լուսաւորէ:  
Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ  
ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Յարգելի Արզումանեան ընտանիք,  
Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղի վարչու-  
թիւնը իր ընտանիքով խորազգաց ցաւակցութիւններ  
կը յայտնէ ձեր սիրելի ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
վաստակաւոր անդամներէն, Կեդրոնական Վարչութեան  
երկարամեայ ատենապետ եղբ. տոքթ. Միսաք Արզուման-  
եանի մահուան տխուր առիթով:

Հ.Մ.Ը.Մ. կորսնցուց իր հաւատաւոր եղբայրներէն մէկը,  
որ անսակարկ նուիրումով եւ զոհաբերութեամբ ամբողջ  
կեանքը ի սպաս դրաւ հայ նորահաս սերունդի հայեցի  
դաստիարակութեան:

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ**

**ԱՆՉՆԴԻՐ ՈՒ ԱԶՆՈՒԱԿԱՆ ՏԻՊԱՐԻ ՄԸ ԿՈՐՈՒՍՏԸ**

Ազնուափայլ տիկ. Արզումանեան  
եւ զաւակունք,

Մեր շատ սիրելի բարեկամին՝  
տոքթ. Միսաք Արզումանեանին  
անակնկալ ու անժամանակ մահ-  
ւան լուրը էպպէս սուգի մատնեց  
մեզ՝ հանդերձ ընտանեօք:

Զրկուած կը զգանք ճշմարիտ հա-  
րապատէ մը, որուն հետ ընտանեօք  
երջանիկ բարեկամութիւն ապրե-  
ցանք աւելի քան 40 տարիներ:

Անհուն նրախորթին եւ բերկ-  
րանք էր գործակցիլ սիրելի տոքթո-  
րին հետ իբր տնօրէնի (Ազգ. Լեւոն  
եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճի) եւ  
ինք՝ ինսամակայութեան անդամ եւ  
ատենապետ նոյն հաստատութեան:  
Իր գործակցութիւնը եղած է մշտա-  
նորոգ խթան մը քոլէճի բարգաւաճման եւ բարօրու-  
թեան ճիգերուն:

Հոգեկան անբացատրելի լիցք կու տար սիրելի տոք-  
թորը, երբ ընկերային մտորումները կը շօշափէին  
Հ.Մ.Ը.Մ.ի կեանքն ու աշխարհը: Բախտաւորութիւն  
եղած էր ինծի իր հետ միատեղ ըլլալ Պատգամաւորա-  
կան բազմաթիւ ժողովներու (1967, 1969, 1971, 1973...),  
ուր իր խօսքը կը լսուէր՝ փորձառու ու պատկառաւոր  
ղեկավարի, անսանձական, անշահախնդիր եւ եղբայ-  
րական սիրով առջուն:

Պէտք կա՞յ վկայակոչելու, որ երկար տարիներ  
բժշկական իր գրասենեակը որքան իր մասնագիտու-  
թեան, նոյնքան եւ հոգեշահ մտորումներով լեցուն  
կտոր մը ակունք եղած էր Պուրճ Համուտի մէջ, կամ՝  
քաղաքապետութեան իր կեդրոնատեղին, ուր բարի ու  
պատկառելի տոքթորը գործակցութեան կը մղէր իր  
խորհուրդին դիմող ամէնէն համեստ անդամները, ըլ-



լային անոնք ֆուրպոլիստ, պասքեր-  
պոլիստ կամ վարչական: Իր խօսքը  
աւելի շատ կ'ընդունուէր իբրեւ յոր-  
դոր եւ խրախոյս:

1964էն 1878, Պուրճ Համուտի Ազգ.  
Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճը  
մեծապէս օգտուեցաւ իր սիրելի եւ  
ժողովրդական ատենապետին՝ տոք-  
թորին իմաստուն, շրջահայեաց եւ  
անբասիր հասարակական գործիչի  
վարկէն:

Վստահ ենք, որ որքան Հ.Մ.Ը.Մ.ի  
մեծ ընտանիքը, նոյնքան եւ Լիբա-  
նանի կրթական պատասխանատու  
շրջանակները- մանաւանդ Ազգ. Լե-  
ւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճի ըն-  
տանիքը- խորապէս պիտի ափսո-  
սան անակնկալ կորուստը այնպիսի  
հասարակական գործիչի մը, որուն ամբողջ կեանքը եւ  
սիրտը տրոփեց հասնող սերունդներու առողջ դաս-  
տիարակութեան եւ հայեցի կրթութեան պահանջով:

հասարակական գործիչի մը, որուն ամբողջ կեանքը եւ  
սիրտը տրոփեց հասնող սերունդներու առողջ դաս-  
տիարակութեան եւ հայեցի կրթութեան պահանջով:

Անկասկած, որ նման անձնատրութեան մը կորուս-  
տը կ'արդարացնէ ամենալայն շրջանակի՝ հազարաւոր  
միութենականներու, կրթական մշակներու եւ գաղա-  
փարապաշտ ազգայիններու խոր վիշտը:

Իր հոյակապ եւ անբեկանելի հայերէնը, ազդու եւ  
իրաւի խօսքը միշտ վառ ու կենդանի պիտի պահեն իր  
յիշատակն ու օրինակելի կերպարը:

Կը զգանք յետ-Եղեռնի դժուար ժամանակաշրջա-  
նին մէջ վերականգնումի համազգային նուիրական  
գործին նուիրուած անձնդիր ու պանուական տիպարի  
մը կորուստին վիշտը:

Ռեւսիտա, Գալիֆորնիա

**ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ**



Թող Աստուած համբերութիւն եւ մխիթարանք պարգեւէ ձեզի ու անոր յիշատակը միշտ անթառամ պահէ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՆԹԱ ԳԼԱՐԱՅԻ  
«ԱՆԻ» ՄԱՄՆԱՃԻՒՎԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
\*\*\*

Սիրելիներ,  
Եղբ. տոքթ. Արզումանեանի մահը իսկապէս մեծ կորուստ մըն է:

Խորազգաց ցաակցութիւններս ձեզի եւ տոքթ. Արզումանեանի ընտանեկան պարագաներուն:

Վշտակցաբար՝

*Մոնթրէայ, Գանադա*  
ՅԱՎՈՔ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ  
\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան,

Սիրելի եղբայրներ,

Անակնկալ եւ խոր ցաւով իմացայ մեր ամէնէն յարգուած եւ նուիրեալ եղբայրներէն՝ տոքթ. Միսաք Արզումանեանի մահը:

Տարիներէ ի վեր ծանօթ ըլլալով իրեն, գիտեմ թէ որքան մեծ ու կարեւոր նպաստ ունեցած է ան մեր սիրելի միութեան: Դժբախտաբար, այս յարգելի միութեան մեծ սիւներէն շատերը կ'իյնան եւ իւրաքանչիւր մեկնողին հետ մենք

կը կորսնցնենք անցեալին հետ մեր կապը, փորձառութիւնն ու իմաստութիւնը:

Աստուած հոգին լուսաւորէ եւ Հ.Մ.Ը.Մ.ը պահէ:

*Մոնթրէայ, Գանադա*  
ԳԷՈՐԳ ՄԱՆԿԵԼԵԱՆ

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան,

Վշտահար եղբայրներ,

Խոր ցաւով տեղեկացայ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի յանկարծական մահուան լուրը:

Պատուական հայորդի մը եւս անցաւ յաւիտեանականութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի ոսկեմատեանին էջերով:

Կը բաժնեմ սուգը Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ ընտանիքին:

Վշտակցութիւններս ձեզի եւ ողբացեալին անմխիթար այրիին ու հարազատներուն :

Յարգա՛նք պայծառ յիշատակին:

Վշտակցօրէն՝

*Գահիրէ, Եգիպտոս*  
ՏՈՔԹ. ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ



# Travel Ways - Egypt

## NILE CROCODILE CRUISES



*Incoming Tour Operator  
Hotel & Cruise Reservation  
Transportation  
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1  
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt  
Tel: 02 2739400/500/600  
www.travelways-egypt.com  
marketing@twaysegy.com

# ԵԳԻՊՏԱՊԱՏՈՒՄ

- Ա -

Մեծ է Հ.Մ.Ը.Մ.ի կորուստը, խոր է կսկիծը:

Քաղաքացիական միութենականի եւ արժանատի ղեկավարի անվերադարձ մեկնումին հեպ, Հ.Մ.Ը.Մ. Կորթ. Միասը Արգումանեանի մահով կը կորսնցնէ նաեւ արդի ժամանակներու իր փայլուն գաղափարախօսներէն մէկը, մեծ պարզամասիսու մը եւ փնտրուած յուշագիր մը, որուն յուշերու Կորուստը շահ Կր բան ունէր ըսելիք միութեան վերջին Կրասնամեակներու պարունոթեան մասին:

Ափսո՛ս, որ շար ուշ սկսաւ ան թուրքին յանգնել իր յուշերը, որոնք երեք գլխաւոր բաժինով եւ ուրք մասով յոյս Կրեան «Մարգիկ»ի նախորդ թիւերուն մէջ: Պարտապ էր նաեւ շարքին յաջորդը՝ «Եգիպտացարուն»ը, որ ահա յեպ-մահու յոյս կը Կրեանէ երկու մասով: Ունէր Կրակաին բազմաթիւ նօթեր, որոնց սպասինած կ'աշխարհէր մեծ եռանդով, կարծէք միութենականի իր վերջին Կարտըն ալ կարարելու եւ աղալէն մեկնելու անբացարեղի աճապարանքով:

Նախախնամութիւնը ալ ճակարագիր մը սակայն վերապահած էր իրեն: Անակնկալ մահը անժամանակ կերպով կարեց իր յուշերուն թելը, ընթերցողներն ու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընկրանիքը գրկելով իր այնքա՛ն բանկագին վկայութիւններէն, որոնք վաղուան պարմագիրին կարեւոր սարաղչը պիտի հանդիսանային:

Ափսո՛ս, հազար սփոսու:

«ՄԱՐԶԻԿ»

## Տոքթ. Միասը Արգումանեան ՄԱՆ ԽՈՍԷ

**1** 977ի Սեպտեմբերին, Լիբանանի քաղաքացիական երկարամեայ պատերազմին երրորդ տարին, անակնկալ առիթը ունեցայ այցելելու զբօսաշրջիկային բնագաւառի մէջ բարձրարժէք քաշողակա-նութիւն ունեցող հնագեղ երկիրներէն, փառաւոն-ներու նախնադարեան բնաշխարհ՝ Եգիպտոսը:

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան հրահանգով, Պուրճ Համուտի մասնաճիւղի պասքէթի խումբը պիտի մեկնէր Եգիպտոս, մասնակցելու համար տեղույն (Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ) գոյգ խումբերուն հետ նախատեսուած մրցաշարքի մը:

Առ այդ, մեկնող խումբին պիտի ընկերանար եղբ. Զաքար Զորպանեանը, իբրեւ մասնաճիւղի ատենապետ եւ խումբին ընկերակցող պատուիրակութեան պատասխանատու:

Եղբայրը ամենայն համեստութեամբ հրաւիրեց զիս՝ Լիբանանի Շրջանային Վարչութեան այդ օրերու ատենապետը, ուղեկցելու իրեն եւ հովանաւորելու պատուիրակութիւնը: Պատասխանս առկախեցի երկու օրով, գործերս կարգի դնելու

պատճառաբանութեամբ: Մտածելու հարց կար, որովհետեւ տեղեակ էի որ Կեդրոնական Վարչութեան ատենապետը՝ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը նոյն թուականներուն Եգիպտոս պիտի ըլլար, «Արժանեաց» շքանշանով պարգեւատրելու «Արարատ»ի վաստակաշատ եղբայրներէն թորոս խաչատուրեանը: Հետեւաբար, ի պաշտօնէ ինք ներկայ կրնար ըլլալ մրցաշարքին առիթով կազմակերպուած հրահանգներուն, հաւաքներուն: Զէի ուզեր, որ երթալս անտեղի թիւրիմացութիւններու դուռ բանար...:

Բարեբախտաբար, պատահեցաւ որ եղբ. Վարդգէս ինք ալ հեռաձայնեց ու յայտնեց, որ տեղեակ է ինձի ուղղուած հրահանգին եւ պնդեց որ չմերժեմ զայն:

Բնականաբար, ա՛լ առաջարկը չընդունելու պատճառ չկար:

Մեկնումի օրը, խանդավառութեամբ միացանք (տիկնոջս հետ) մարզիկներուն ու Պուրճ Համուտի պատուիրակութեան եւ մեկնեցանք Եգիպտոս:

Գահիրէ հասնելով դիմաւորուեցանք Հ.Մ.Ը.Մ.ական ծանօթ եւ անծանօթ եղբայրներու կողմէ, զլիսաւորութեամբ եղբ. տոքթ. Սուրէն Պայրամեանին:

Անցագրային յամրընթաց գործողութիւններու աւարտին առաջնորդուեցանք քաղաքամէջ եւ տեղաւորուեցանք շուկա-



յի վրայ՝ դիւրամատոյց պանդոկ մը:

Հանգիստի կարճ դադարէ մը վերջ, մեզի հոգատար նշանակուած եղբայրները վերադառնալով մեր մօտ, մեզ տարին Հ.Մ.Ը.Մ.- «Արարատ»ի համալիր:

Այնտեղ է որ տեղի ունեցաւ բարի գալուստի պաշտօնական ընդունելութիւնը եւ հիւրերու-հիւրընկալներու փոխադարձ ծանօթացումը, պատշաճ հիւրասիրութեամբ: Կողմերը զիրար ողջունեցին, յաւուր պատշաճի արտայայտութիւններով եւ Լիբանանի խօսքը արտասանելը սրուեցաւ ինծի:

Ստորեւ կը զետեղեմ անկէ հատուած մը, իբրեւ այդ ձեռնարկին պատմաժամանակագրական առանձնայատուկ արժեքի:


«Առաջին անգամը չէ որ Գահիրէի «Արարատ»ը եւ Լիբանանի մեր մարգական խումբերէն մէկը հանդիպում կ'ունենան իրարու հետ:

«1949ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուքի պասքէթի խումբին Գահիրէ այցելութեամբը հաստատուած եղբայրական ու գաղափարական կապերը դուռը բացին այլ ու փոխադարձ հանդիպումներու (Պեյրուքի մէջ թէ Նեղոսի ափին), որոնց վստահ եմ վերջինը չըլլայ այս օրերու մրցաշարքը:

«Վստահ եմ, մասնաւորաբար անոր համար, որ Հ.Մ.Ը.Մ.ականի մեր համոզումով, մարգական միջ-գաղութային բնոյթի ձեռնարկները ինքնանպատակ ձեռնարկներ չեն, այլ կը միտին գաղթօճախները իրարու գօղելու, ստեղծելու ազգային-գաղափարական ապրումներու, հետանկարային ձգտումներու հասարակ յայտարարներ, եւ ֆիզիքական ու բարոյական ուժերու համադրութեամբ ազգի գոյապայքարին նուիրաբերելու Հ.Մ.Ը.Մ.էն սպասուած աշխատանքի բեղուն բաժինը:

«Այս գիտակցութեամբ եկած ենք եւ այս նպատակով յաճախ աչիտի այցելելնք իրարու»:

Եզրիպտոս այցելելու հաճելի դարձաւ մէկ կողմէ ազգային-միութենական պարտականութեան մը կատարումով, միւս կողմէ մօտէն ծանօթանալով համաշխարհային պատմութեան մէջ արժանաւոր տեղ ունեցող քաղաքակրթութեան մը, եւ հնամենի ճարտարապետութեամբ զայն յաւերժացնող, խորհրդաւոր կոթողներու ականատես դառնալով: Առ այդ կ'ուզեմ երախտագէտ զգացումներով վկայել, որ Եզրիպտոսի եղբայրներուն հոգեզուարճ ծրագրումով այցելեցինք Կիզէ եւ ըմբռնեցինք եզակի սիլուէթը Սֆինքսին, որ իր թեւաւոր մարմնով ու կնովական զլուխով, աւազի ու անապատի մէջ բարձրացուած է դարեր առաջ, իբրեւ աստուածներու մերձա-



Սեպտ. 1977, Գահիրէ:

կայ դամբարաններուն (=բուրգերուն) մշտնջենաւոր պահակ:

Մեծ հետաքրքրութեամբ ու տեսակ մը երկրիւղածութեամբ մօտեցանք անպարագիծ մահաստանին եւ ծանօթացանք աստուածներուն ձօնուած, զանազան չափի ու հասակի կառույցներուն, որոնք օթեւան եղած էին մահացող փառաւորներուն: Այնտեղ տեղադրուելէ վերջ, իրենց համար նախատեսուած ելարաններով կարելի կ'ըլլար իրենց (ըստ աւանդութեան) միանալ աստուածներուն: Աւելցնեմ, որ աշխարհահոշակ այս բուրգերը, ճարտարապետական զարմանալի հնարքով մը, իրենց իսկական ծաւալէն աւելին տպաւորութիւնը կը ձգէին սրատես ու հետաքրքիր այցելուին վրայ:

Յնցող տպաւորութիւններով տեղի ունեցաւ կեանքի ու մահուան կիսաստուածներու եւ աստուածներու խորհուրդներով թաթաւուն այդ շրջապտոյտը:

Տեսանք Քէֆոփսի մեծ բուրգը, Քեփրէնի, Միկերինոսի յուշակոթողները, զարմանահար իմացանք որ «Մեծ Բուրգը» կառուցուած է 30 տարիէն, 100.000 բանուորներով:

Այդ օր անգամ մը եւս զգացինք, որ պարզ ու յստակ ճարտարապետական կառույցները, մեծութեան, վեհութեան խորհրդանիշ եղած են ու կը մնան:

Յաջորդ օրերուն, գոհունակութեամբ շրջեցանք Գահիրէի քաղաքամէջի տեսարժան ճեմավայրերը... ինչպէս Նեղոսն ու իր ափերը ծաղկեցուցած արդիական պանդոկներու քաղաքամասը: Թանգարան ու զմուսուած արքաներու դազաղները եւ եզրիպտադրոշմ, ուշադրաւ պատմագեղարուեստական այլ իրերու ցուցասրահները: Այս բոլորը, անշուշտ, Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու խոհական հոգատարութեամբ:

Յարմար կը գտնեմ այստեղ նշել շրջագայութիւն մը, զոր ունեցանք Վիզէն Փուչիկեան անունով՝ Գահիրէի բժշկական համալսարանի լիբանանահայ ուսանողի մը փափաքին ընդառնալով:

Կենցաղավարական Հ.Մ.Ը.Մ.ավայել խոհականութեամբ մը, ինծի անծանօթ երիտասարդը պարտականութիւն համարած է զայլ պանդոկ, բարի գալուստ մաղթելու մեզի եւ սրտաբուխ հրաւէրով մը յարգել Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի ատենապետն ու տիկինը:

Այցելելով մեր իջեւան-պանդոկը, մեզ չէ գտած, եւ բացիկով մը ուզած է տեղեկագրել իր անյաջող այցելութիւնը եւ յաջորդ օրը վերստին գալու գրաւոր խոստում մը ձգելով պանդոկի հերթապահ պաշտօնեային, մեկնած է:

(Շար.1)

# ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՀԵՏ ԶՐՈՅՑ

## Յ. Անմահունի ՆԻԿՈՍԻԱ

Սիրելի նոր սերունդի հայրերին և արիներ,  
Մեր ազգապահպանումի գլխավոր յենարանը դուք էք, որ  
վաղուան մեր տեղերը պիտի գրաւէք: Սփիւռքի ալեկոծ, փո-  
թորկալից, ալլասերումի հոսանքին դէմ ապահով նաւահան-  
գիստ մը պիտի ըլլաք:

Հին սերունդը պէտք է գիտնայ ճամբայ բանալ եւ տեղ տալ  
նոր սերունդին եւ փոխանցէ հայապահպանումի եւ հայասի-  
րութեան լուսաւոր ջահը ձեզի՝ վստահութեամբ:

Դո՛ւք, նոր սերունդ, պէտք է որ ըլլաք աւելի խիզախ, աւե-  
լի տոկոս եւ վճռական ու վստահ քայլերով առաջնորդելու  
պատրաստ գալիք սերունդ-  
ները՝ դէպի հայոց լուսաւոր  
ապագան, դէպի Արարատ...

Դո՛ւք, սիրելի պատանի-  
ներ, պարման-պարմանու-  
հիներ, պէտք է գիտակցու-  
թիւնը ունենաք նպատակի  
մը համար, իտէպի մը  
ձգտումով՝ արժանապա-  
տուութեամբ եւ արժանի-  
քով ծառայելու ձեր ազգին  
ու համայնքին, ձեր շրջա-  
պատին ու ընտանիքին,  
հայադրոշմ եւ հայեցի  
դաստախրակութեամբ ըլ-  
լալու համար վաղուան  
օրինակելի, պիտանի ազ-  
գայիններ:

Սիրելիներ, անձ մը  
առանձինն ոչինչ կրնայ  
ընել: Եղէ՛ք միաբան,  
ձեռք-ձեռքի տալով, խմբա-  
յին աշխատանքով հայ ազգին ծառայելու գիտակցութեամբ,  
գալիք սերունդներուն օրինակելի վարքով յարատեւեցէք, որ-  
պէսզի գոյատեւեն հայութիւնն ու հայրենիքը:


Դո՛ւք, սիրելի պատանիներ նոր սերունդի, սահմանուած  
էք ըլլալու վաղուան վարիչներն ու ղեկավարները: Անտարբե-  
րութիւնը, անհոգութիւնը նահանջ են: Պէտք է գիտնաք միշտ  
ամուր կենալ պատնէշին վրայ՝ գիտակցութեամբ եւ նուիրու-  
մով: Կարգապահութիւնն ու հնազանդութիւնը պարկեշտ եւ  
ազնիւ մարդու գործ է:

Յարմար մարդիկ յարմար զիրքերու վրայ պէտք է

դրուին: Հիներէն ու երէցներէն օրինակ պէտք է առնենք, կա-  
րենանք եւ գիտնանք իրենց փորձառութիւններէն օգտուել:  
Միշտ դէպի լոյսին երթանք՝ խաւարը ետին ձգելով: Յուսա-  
հատութիւնը պարտութիւն է:

Ժամանակին, երբ Լենկ Թիմուր պարտութենէ մը ետք  
վրանին տակ յուսահատ նստած էր, վրանին սիւնին վրայ տե-  
սաւ մըջիւն մը, որ բարձրանալ կը փորձէր, բայց կ'իջնար:  
Մըջիւնը բազում անգամներ փորձելէ ետք, յաջողեցաւ բարձ-  
րանալ սիւնին վրայ: Այս տեսնելով, Լենկ Թիմուր շեփորները  
հնչել տուաւ եւ յարձակումի անցնելով փախուստի մատնեց  
թշնամին:

Պէտք է գիտնաք, որ թէ՛ յաղթել եւ թէ՛ պարտուիլ կայ-  
պէտք է վեհանձն ըլլալ պարտուողին հանդէպ եւ յաղթանակի  
պահուն ամբարտաւան չըլլաք: Երբ լաւ գործ մը կ'ընեն մեր  
հակառակորդները, պէտք է գիտնանք զնահատել եւ շնորհա-  
ւորել զիրենք:



Եղբ. Անմահունի իր 400-  
աւելի պէճերով:

**ԵՂԲ. ՅԱՐՈՒՅԻՆ ԱՆՄԱՀՈՒՆԻ**

Եղբ. Յարութիւն Անմահունի ծնած է  
1927ին, Նիկոսիա: Փոքր տարիքէն  
մեծ սէր ունեցած է սկաուտութեան  
հանդէպ: Յաճախած է Ալգային Մելիքեան-  
Ուլունեան վարժարան եւ 1943-1994ին՝ Մել-  
գոնեան կրթական հաստատութիւն:  
1935ին մաս կազմած է գալիկական,  
ապա սկաուտական Մելիքեան-Ուլունեան  
4րդ խումբին: 1943ին, Մելգոնեանի 7րդ  
խումբին Վարիչ Առաջնորդն է ան: 1959ին,  
հիմնադիրներէն մէկն է Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ե.Մ.ի  
Կիպրոսի 77րդ խումբին: Եղած է Հ.Ե.Մ.ի ան-  
ւանի խումբին ընդհանուր արիապետ:  
1962ին Լոնտոնէն ստացած է «Wood  
Badge»: 1963ին մասնակցած է Մարաթոնի  
11րդ համաշխարհային ճամպորիին: 1966ին  
կը ստանայ «Երկար եւ Բացառիկ Ծառայու-  
թեան» վկայագիր եւ շքանշան՝ Կիպրոսի  
նախագահ Մակարիոս Արքեպիսկոպոսէն:  
1968ին, Հ.Մ.Լ.Մ.ի 50ամեակի շքանշանը՝ Լի-  
բանանի Շրջանային Վարչութենէն: 1970ին,  
«Արիի Արժանեաց Շքանշան»ը դարձեալ  
Կիպրոսի հայասէր նախագահ Մակարիոս  
Արքեպիսկոպոսէն:  
1968էն մաս կազմած է Կիպրոսի սկաու-  
տական վերին մարմնին եւ ստացած է 3րդ  
«Wood Badge» տոտիկը եւ մաս կազմած է մի-  
ջազգային սկաուտութեան:  
1965էն եղած է Կիպրոսի հայկական բոլոր



«Արմաւի ծառ տնկողը արմաւը չ'ուտեր» կ'ըսեն: Ուրեմն, ազգին օգտակար գործեր կատարենք. բարոյական եւ նիւթական ամէն աջակցութիւն չզլանանք անոր, որովհետեւ անհատներով կը կազմուի ազգը, համայնքն ու հայրենիքը: Պէտք է մտածել, թէ ի՞նչ կարելի է տալ ազգին եւ ոչ թէ ի՞նչ օգուտ կարելի է քաղել անկէ: Երբ շիտակ ես, ծուռ մարդոց ըսածին կարեւորութիւն մի' տար:

Մարդ կը ծնի եւ կը հասուննայ ժառանգական գիծով, ընտանիքին, շրջապատին, դպրոց-եկեղեցիին հոգեբարոյական դաստիարակութեամբ: Բայց մարդուն մէջ բնազդը զօրաւոր է: Կ'ըսեն արուեստագէտը կը ծնի, չի շինուիր, բայց կը դաստիարակուի: Նոյնպէս, հայրենասէրը կը ծնի: Չես կրնար հայրենասիրութիւն, հերոսութիւն եւ զոհաբերութիւն սորվեցնել, եթէ ազգասիրութեան եւ զոհաբերութեան կայծը գոյութիւն չունի:



2001. եղբ. Անմահունի Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսէն կը ստանայ Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշան:

նի: Իսկ հերոսները կը ծնին, բայց չեն մեռնիր:

Գիտնանք մեր թերութիւնները տեսնել՝ մեր առաւելութիւնները արժեւորելու գիտակցութեամբ:

Յուսահատութիւնը լաւ չէ: Շուտ յուսահատող ժողովուրդ ենք, շատ զգայուն, երբեմն շատ լաւատես, երբեմն՝ յուսահատ, բայց լաւ է, որ ըլլանք միշտ իրատես:

Օտարամոլութիւնը, աշխարհաքաղաքացիութիւնը եւ քաղքենիացումը հոսանքն ի վար գահավիժում է: Միայն «ես»ի մասին մտածելով ազգասէր չենք ըլլար: Քննադատել շատ կը սիրենք, գնահատել ալ գիտնանք: Հայութեամբ հպարտանալու առիթներ ստեղծենք: Օրինակելի, նախանձելի, հազարազանձ մշակոյթ եւ հերոսական պատմութիւն ունինք: Հպարտ ըլլանք մեր անցեալով եւ գալիքով:


սկառուտական խումբերու՝ *AYMA*ի, Նարեկ Ազգային վարժարանի եւ Մելգոնեան կրթական հաստատութեան շրջանային գործավար, վերակազմակերպելով անոնց գործունէութիւնը:

1974ին, Կիպրոսի ներխուժումի օրերուն, իբրեւ պատասխանատու, օգտակար եղած է գաղթականներու պարենաւորման աշխատանքին եւ այդ առիթով ստացած է շքանշան եւ գնահատագիր:

1978ին եւ 1986ին մասնակցած է համա-Ն.Մ.Ս.ական Բ. եւ Գ. բանակումներուն, Քալանոս եւ Լոնտոն: Գործօն մասնակցութիւն բերած է նաեւ Յունաստան, Լիբանան, Սուրիա, Կիպրոս տեղի ունեցած շատ մը բանակումներու, հանդիպումներու եւ միջազգային սեմինարներու:

Եղբայր Անմահունի իր ետին ունի երկար տարիներու ծառայութեան եւ նուիրումի վաստակ մը, որ չինք բարձրացուցած է բարձրագոյն աստիճանի՝ «Scout H.Q. Liason For All Armenian's Scout's Commissioner of Cyprus»ի:

Հրատարակած է «Բերթուածներ մօր սիրոյ մասին» եւ «Հայ լեզուի հատրնտիր հաւաքածոյ» գրքոյկները: Ունի հրատարակելի գիրքեր: Կ'աշխատակցի Կիպրոսի մէջ լոյս տեսնող «Արձագանգ», «Գեղարդ», «Ապատ Չայն» ամսաթերթերուն եւ «Միշտ Յառաջ» սկառուտական պարբերաթերթին:



Կիպրոսի սկառուտական բարձրագոյն մարմինը գնահատելով իր երկարամեայ ծառայութիւնը՝ իրեն շնորհած է բազմաթիւ գնահատագիրներ եւ շքանշաններ:

1986ին, Կիպրոսի նախագահ Կիպրիանոս վայն պարգեւատրած է «Երկար Ծառայութեան» շքանշանով: 1987ին ստացած է շքանշան մը *FAO*էն: 1987ին ստացած է «Պրոնպէ Եղնիկ» արիական շքանշանը:

1999ին, նախագահ Քլերիտէսէն ստացած է «Արծաթեայ Եղնիկ» սկառուտական բարձր շքանշանը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս, գնահատելով էղբ. Անմահունիի երկարամեայ ազգօգուտ գործունէութիւնը, իրեն շնորհած է «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի» շքանշանը:

2005ին արժանացած է «Ոսկէ Եղնիկ» բարձրագոյն արիական շքանշանին, ձեռամբ Կիպրոսի կրթութեան եւ մշակոյթի նախարար Պեֆլիկոս Եորդիատիսի:

Ն.Մ.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը, 2003ին, էղբ. Անմահունիին պարգեւատրեց «Ծառայութեան» շքանշանով:





Մրցանակակիր խումբերու ներկայացուցիչներու եւ մարզիկներու յիշատակի նկար:



Կը ճանչնա՞ք զանոնք: Հ.Մ.Ը.Մ.ի Ռէլիթի ֆուտբոլիստներն են անոնք:

(Լուսանկարները՝ «ՖՈՒՕ ԲԱՖՖԻ»-ի)



Կիպրոս

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒՏԲՈՒԼ-ՄԱՍՆԱՃԻ

## Թղթակից ՆԻԿՈՍԻԱ

Հովանավորութեամբ Կիպրոսի մարմնամարզի պետական կազմակերպութեան (ԿՕԱ) եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հայ Երիտասարդաց Միութեան Կիպրոսի Մեկուսի Վարչութեան, 28 եւ 29 Ապրիլ 2007ին, Նիկոսիոյ մէջ տեղի ունեցան Փուլթալի եւ պասքէթպոլի Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի միջմասնաճիւղային խաղեր:

Միջմասնաճիւղային այս խաղերը յատուկ փայլք կը ստանային, քանի վերջին տասնամեակներուն առաջին անգամն էր որ նման մարզական հաւաք մը տեղի կ'ունենար Կիպրոսի մէջ, ի մի խմբելով աւելի քան 150 մարզիկ-մարզիկուհիներ, պատասխանատուներ եւ ընկերակցողներ Լիբանանէն, Սուրիայէն, Երուսաղէմէն, Քուէյթէն եւ Կիպրոսէն:

Խաղերուն իրենց մասնակցութիւնը կը բերէին հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Փուլթալի եւ պասքէթպոլի նորակազմ խումբերը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Փուլթալի եւ պասքէթպոլի ներկայացուցչական խումբերը, Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի Փուլթալի եւ պասքէթպոլի խումբերը, Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի պասքէթպոլի խումբը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի Փուլթալի խումբը:

Կիպրոսի մարմնամարզի բարձրագոյն կազմակերպութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան հովանավորութիւնը վայելելով, կազմուած էր խաղերու պատուոյ յանձ-





ԻՐԱՆ



Լիբանան

# ԻԹՊՈՒԻ ԵՒ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՎԱՅԻՆ ԽԱՂԵՐ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

## - ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՇԱԲԱԹԱՎԵՐՋ ՄԸ, ՈՐ ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹԻԻՆԸ ԿԸ ՎԵՐԱՄԿՐՏԷ ՀՄԸՄԱԿԱՆ ՈԳԻՈՎ

նախուժը, որուն նախագահն էր Կիպրոսի ժողովրդավարական ՏԻԿՕ կուսակցութեան նախագահ եւ նախկին ՀՅԴՄ-ական մարզիկ Մարիոս Կարոյեան, իբրեւ փոխ նախագահ ունենալով ԿՕԱԻ փոխ նախագահ Ռիբքոս Թէոխարիտիսը եւ իբրեւ անդամներ՝ Կիպրոսի խորհրդարանի մէջ հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը եւ ՀՄԸՄ-ՀՅԴՄ-ի ատենապետ եղբ. տոթթ. Անդրանիկ Աշճեանը:

### ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Մարզախաղերը տեղի ունեցան Շաբաթ, 28 Ապրիլին, Նիկոսիոյ մէջ գտնուող ԿՕԱԻ մարզահամալիրին մէջ: Առաջնութեան կատարուեցան զտուժի խաղերը:

«Ֆլորակիս» մարզաւանին մէջ, Կիպրոսի պասքէթպոլի խումբը 39-10 արդիւնքով պարտութեան մատնեց Քուէյթի կազմը, մինչ Լիբանան աւարտական իր տոմար ապահովեց 73-18 արդիւնքով պարտութեան մատնելով Դամասկոսի խումբը:

«Մակարիոն» մարզադաշտին մէջ տեղի ունեցած Փուլթպոլի զտուժի խաղերուն, Կիպրոս աւարտականի իր տոմար ապահովեց 5-3 արդիւնքով պարտութեան մատնելով Երուսաղէմը, իսկ Լիբանան աւարտականի իր տոմար ապահովեց 3-0

արդիւնքով պարտութեան մատնելով Քուէյթը:

Աւարտական փուլի մրցումները տեղի ունեցան դարձեալ ԿՕԱԻ մարզահամալիրին մէջ, մեծ պաշտօնականութեամբ եւ ներկայութեամբ մեծ թիւով հանդիսատեսներու:

Պասքէթի աւարտականը՝ Կիպրոսի եւ Լիբանանի միջեւ, տեղի ունեցաւ «Լեֆկոթէոն» մարզադաշտին մէջ: Խաղին առաջին զնդակը նետեց Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեան:

Յատկանշական էր, որ հազիւ երկու ամսուան կեանք ունեցող Կիպրոսի խումբը դժուարութեան մատնեց Լիբանանի զօրաւոր խումբը: Աւարտականի արդիւնքը՝ 48-58 ի նպաստ Լիբանանի:

Ֆուլթպոլի աւարտականը, դարձեալ Կիպրոսի եւ Լիբանանի հաւաքականներուն միջեւ, տեղի ունեցաւ պասքէթի աւարտականէն անմիջապէս ետք, նոյն համալիրին «Մակարիոն» մարզադաշտին մէջ: Խաղասկզբին, մէկ վայրկեան լուրջութեամբ յարգուեցաւ յիշատակը անողոք հիւանդութենէ վաղաժամ մահացած Լիմասոլի ՀՅԴՄ-ի հիմնադիր՝ եղբ. Նորայր Յովհաննէսեանին:

Կիպրոսի ՀՄԸՄ-ՀՅԴՄ-ի խումբը, որ կը մրցի կղզիի ոչ-արհեստավարժ խոյանութեան Բ. դասակարգին մէջ, դժուարութեան մատնեց Լիբանանի Բ. դասակարգի մէջ մրցող ՀՄԸՄ-ի ներկայացուցչական խումբը: Խաղը աւարտեցաւ 1-2 արդիւնքով: Կիպրոսի կողմ նշանակեց Գրիգոր



Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան «Պոպուլարեան» շքանշանով կը պարգևատրել եղբայրներ Կարօ Թերզեանը եւ Վազգէն Պոտիկեանը:

Մահտեսեան, իսկ Լիբանանի կողմը՝ Զոհրապ Կարապետեան եւ Մհեր Պէրպէրեան:

**ԽՐԱՄՆԱԿԱՆ**

Երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու, պատուիրակութիւններու եւ կիպրահայ ազգայիններու աւելի քան 400 հաշուող բազմութեան մը ներկայութեան, տեղի ունեցաւ խրախմանք, Նիկոսիոյ ճաշարաններէն մէկուն մէջ:

Ներկայ էին Կաթողիկոսական Փոխանորդ Սրբազան Հայրը, ԿՕԱԻ փոխ նախագահ Ռիբբոս Թէոխարիտիս, հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Գառնիկ Մկրտիչեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Կարպիս Գապասագալեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի եւ Սուրիոյ Շրջանային Վարչութիւններու, Քուէյթի եւ Երուսաղէմի Մեկուսի Վարչութիւններու ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի վարչական կազմը, Հ.Յ.Դ.ի, ՀՕՄի,



Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Կիպրոսի մարմնամարզի պետական կազմակերպութեան փոխ նախագահ Ռիբբոս Թէոխարիտիսին կը յանձնէ միութեան յուշանուէրը:

Համագգայինի, Լաոնաբայի Հայ Ակումբի, Լիմասոլի Հայ Երիտասարդաց Միութեան եւ Հ.Յ.Դ. ԿԵՄի ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավար՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի վարչութեան ատենադպիր եղբ. Յարութ Թահմազեան բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի ատենապետ եղբ. տղթ. Անդրանիկ Աշճեանը, որ բարի գալուստի իր խօսքէն ետք, յայտնեց. «Մարգախաղերով լեցուն օրէ մը ետք, հաւաքուած ենք ընկերային հանելի երեկոյ մը անցընելու եւ անշուշտ պարգեւատրելու մարգախաղերու ախոյեանները»: Ան նշեց ներկայութիւնը հայրենի «Երկիր Մեղիս» պատկերասփիւռի կայանի թղթակիցին, յուսարով որ շաբաթավերջի ձեռնարկները արձագանգ կը գտնեն թէ՛ հայրենիքի եւ թէ՛ համայն հայութեան մօտ, փաստելով որ Կիպրոսի փոքր գաղութը կրնայ յաջողութեամբ իրագործել նման ձեռնարկներ:

Իր խօսքը աւարտելով, եղբ. Աշճեան նշեց. «Այս խաղերուն իմաստը պետք է փնտոել Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անդամակցութեան ընձեռած բարիքներուն մէջ: Քանի մը տարի է, որ Հ.Ե.Մ.ը վերամիացած է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին, եւ այս ձեռնարկները առաջին արդիւնքն են այդ վերահաստատուած կապերուն եւ բարիքներուն»:

Ապա բեմ հրաւիրուեցան Կեղրոնական Վարչութեան եւ շրջաններու ներկայացուցիչները, կատարելու համար յուշանուէրներու աւանդական փոխանակութիւնը:

Յաջորդեց միջ-մասնաճիւղային խաղերու մրցանակաբաշխութիւնը: Ֆուտպոլի եւ պասքէթի խումբերու խմբապետները բեմ ներկայացան եւ ստացան առաջնութեան, երկրորդութեան եւ մասնակցութեան բաժակներ, ԿՕԱԻ փոխ նախագահի, հայ համայնքի պետական ներկայացուցիչի, Կեղրոնական Վարչութեան ատենապետի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի ատենապետի ձեռամբ: Առաջնութեան զոյգ բաժակները յանձնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի խմբապետներուն, երկրորդութեան զոյգ բաժակները՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի խմբապետներուն, իսկ







Յուշանուէրներու փոխանակում եւ մրցանակաբաշխութիւն:

մասնակցութեան բաժակները՝ Հ.Մ.Լ.Մ-ի Քուէյթի խմբապետներուն, Հ.Մ.Լ.Մ-ի Դամասկոսի խմբապետուհիին եւ Հ.Մ.Լ.Մ-ի Երուսաղէմի խմբապետին:

Մրցանակաբաշխութենէն ետք, դարձեալ խօսք առաւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ե.Մ-ի ատենապետը, որ յայտնեց, թէ վարչութիւնը միջ-մասնաձիւղային խաղերու տօնական առիթով որոշած է «Ծառայութեան» շքանշանով պարգևատրել երկու Հ.Մ.Լ.Մ.ականներ: Բեմ հրաւիրելէ ետք Հ.Մ.Լ.Մ-ի Կեղրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեանը, եղբ. Աշճեան յաջորդաբար հրաւիրեց Հ.Մ.Լ.Մ.-

Հ.Ե.Մ-ի երբեմնի մարզիկ, երբեմնի սկաուտապետ եւ Հ.Մ.Լ.Մ-ի ընտանիքի վերամիացման տարեշրջանի ատենապետ եղբ. Կարո Թերզեանը եւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ե.Մ-ի Փութպոլի խումբին տասնամեակներ շարունակ իբրեւ մարզիկ, ապա իբրեւ մարզիչ ծառայած եղբ. Վազգէն Պոտիկեանը, ստանալու համար Հ.Մ.Լ.Մ-ի «Ծառայութեան» իրենց շքանշանները:

Պաշտօնական բաժնի վերջին մասով բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Լ.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, որ նախ յանձնեց Կեղրոնական Վարչութեան յուշանուէրները՝ ԿՕԱԻ փոխ նախագահին, հայ հա-



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Reservations** Yerevan  
 32-38, Hanrabadoutian Street,  
 Yerevan 375010, Armenia  
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
 sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)





մայնքի պետական ներկայացուցիչին եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ին: Ապա, ան փոխանցեց Կեղրոնական Վարչութեան խօսքը, ուր ի միջի այլոց, միջ-մասնաճիւղային խաղերուն ակնարկելով, ան ըսաւ. «Ըստած է, որ չսպասուած քարը գլուխ կը ծակէ: Այսպէս ալ Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.ական մեր եղբայրները չսպասուած ժամու մը նոր կայծ մը արձակեցին այս շրջաններէն ներս: Խօսքը գործի վերածելը, մանաւանդ այս օրերուն, բոլորս ալ քաջ գիտենք որ որքա՛ն դժուար է, սակայն Հ.Մ.Ը.Մ.ականը հաւատարիմ՝ իր խոստումին՝ պարտաւոր է անկարելին կարելի՝ դարձնել: Ահա այս գիտակցութեամբ ու նախանձախնդրութեամբ Կիպրոսի վարչական մեր եղբայրները անցան գործի գլուխ եւ ի գին ամէն գոհողութեան յանձն առին յաջողցնել այս ձեռնարկը Հ.Մ.Ը.Մ.ին վայել արդիւնքով: Ողջոյնի մեր խօսքին մէջ իրենց այս յանձնառութեան համար ըսինք պատի՛ւ նախաձեռնութեան: Այսօր կը հաստատենք մեր խօսքը՝ պատի՛ւ խօսքը գործի, կեանքի ու ապրումի վերածողներուն»:

**Իր խօսքը Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ-մարզիկուհիներուն ուղղելով, եղբ. ատենապետը յայտնեց.** «Ինչ քաջ պլանի գիտնաք, որ երբ իրարու դէմ կը մրցիք՝ յաղթողի ու յաղթուողի ակնկալութիւն պիտի չունենաք, որովհետեւ հոն միայն մէկ յաղթող կայ՝ Հ.Մ.Ը.Մ.ն է ան:»

**Եզրափակելով իր խօսքը, եղբ. Մկրտիչեան անդրադարձաւ «Ծառայութեան» շքանշանի տուչութեան եւ ըսաւ.** «Անցեալին պարբերական էր շքանշանը, չըսելու համար պարագայական, հիմա յարաբերաբար առատաձեռնութիւն կայ, այս առթիւ կը գնահատենք մեր երկու եղբայրները՝ Կարօ Թերզեանը եւ Վազգէն Պոտիկեանը, որոնք քիչ առաջ



Կիպրոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի սօս:

ստացան «Ծառայութեան» շքանշաններ: Մենք անոնց ետին կը տեսնենք սերունդ մը եւ շրջան մը արժեւորելու գնահատումը»:

**Կեղրոնական Վարչութեան խօսքէն ետք, պաշտօնական բաժնին յաջորդեց տօնական մթնոլորտը:** Բեմ բարձրացաւ լիբանանահայ սիրուած երգիչ Հրաչ Կայծակեանը, որ Սեղօ եւ Շաբէ Պաղտասարեաններու եւ Վահէ Սիմոնեանի ընկերակցութեամբ, հայկական երաժշտութեան, երգի ու պարի աննախընթաց երեկոյ մը պարգեւեց Հ.Մ.Ը.Մ.ի շուքին տակ համարմուտ ճարտարապետ ներկաներուն, մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը:



Ռպոսիա. մարզախաղերու մասնակիցատուիրակութիւնները Հայկական Յիսուսականութեան յիշատակին կառուցած յուշարձանին առջեւ:

**ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 29 Ապրիլի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնները, գլխաւորութեամբ Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, պաշտօնական այցելութիւն մը տուին Կիպրոսի Հայոց Ազգային Առաջնորդարան: Առաջնորդարանի դահլիճին մէջ, Կեղրոնական, Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններու ներկայացուցիչները ընդունուեցան Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի կողմէ: Սրբազան Հայրը հակիրճ ձեւով ներկայացուց Կիպրոսի Թեմին եւ գաղութին պատմութիւնը, ապա Կեղրոնական Վարչութեան



եւ շրջաններուն նուիրեց «Հայաստանեայց եկեղեցին Կիպրոսի մէջ» արլոմէն մէկական օրինակ: Այնուհետեւ, իւրաքանչիւր մարդիկ աջահամբոյրի մօտեցաւ եւ Սրբազան Հօրմէ ստացաւ յուշանուէր մը:

Կէսօրին, պատուիրակութիւնները հիւրընկալուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի ակումբին մէջ:

**Հ.Յ.Գ. 117ԱՄԵԱԿԻ ՀԱՆԳԻՍՈՒԹԵԱՆ ՍԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ**

Կէսօրէ ետք, պատուիրակութիւնները ներկայ գտնուեցան Հ.Յ.Գ. 117ամեակի հանդիսութեան, «Փասիտի»ի ամփրիթատրոնին մէջ:

Հանդիսութեան բացման խօսքը կատարեց Հ.Յ.Գ. Կիպրոսի Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Մանուկեան, որմէ ետք ցուցադրուեցաւ տեսաերկ մը՝ Հ.Յ.Գ.ի պատմութեան եւ Կիպրոսի շրջանի վերջին տասնամեակներու նուաճումներուն մասին: Ապա, օրուան պատգամը փոխանցեց Հ.Յ.Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ Յակոբ Հաւաթեան:

Յաջորդեց գեղարուեստական յայտագիր, որուն առաջին բաժնին մէջ ելոյթ ունեցաւ Համազգայինի «Սիփան» պարախումբը, իսկ երկրորդ՝ եզրափակիչ բաժնով յաջորդաբար ելոյթ ունեցան Շաքէ Պաղտասարեան եւ Հրաչ Կայծակեան:

Ձեռնարկը իր գագաթնակէտին հասաւ, երբ ամբողջ սրահը՝ աւելի քան 400 կիպրահայեր եւ Հ.Մ.Ը.Մ.-ականներ, միա-

բերան երգեցին ազգային-յեղափոխական երգեր, լաւագոյն կերպով իր աւարտին հասցնելով կիպրահայութեան պատմութեան մէջ ոսկեայ տառերով արձանագրուելիք անմոռանալի շաբաթավերջը:

**ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

- Տոքթ. Միսաք Արզումանեանի մահուան առիթով, Մարգիկին Կը Գուրեան՝
  - Տէր եւ Տիկ. Վարուժան Սերոբեան (Մոնթրէալ) 100\$
  - Տէր եւ Տիկ. Միհրան Ծիմշիրեան (Պէլրոս) 100\$
- Երուանդ Գազանճեան (Արեւելեան Մ. Պ) 100\$
- Եղբ. Յակոբ Գարակէօզեանի մահուան առիթով՝
  - Եղբ. Միհրան Ծիմշիրեան 50.000 Լ. ռ.

**ՍՏԱՅԱՆՔ**

**ԽՈՐԱՆԱՐԿ**  
 Ծահպան  
 Ֆիթուսճներ, Պէլրոս 2006

*'Made from one single slice of natural Australian opal'*

*Classique*  
**OPAL DIAL WATCH**

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.*  
 123 Clarence Street  
 Sydney 2000  
 Australia

Phone: +61 2 9290 2199  
 fax: +61 2 9262 1630  
 Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
 Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)



Հ.Մ.Ը.Մ.-ֆանսի ատենապետ եղբ. Հրաչ Միսեռեան (ախճ) յուշանուէրով մը կը պատուէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Լեւոն Պաղտասարեանը:



Ալպարտական երգչախումբը:

# Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԵՒ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՄԻՋ-ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՐՅԱՇԱՐՔԸ

ՆՈՒՐՈՒԱԾ՝ ՄԱՄՆԱՃԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅՈԱՄԵԱԿԻՆ

## Սեւան Նապարեան ՓԱՐԻՉ

**Հ**ՄԸՄ-Ֆրանսի մասնաճիւղը այս տարուան իր ձեռնարկները նուիրած է իր հիմնադրութեան 30ամեակին:

Աւանդադաս դարձած միջ-եւրոպական մրցաշարքը՝ «Սուրէն Մուրատեան» բաժակը եւս ընդգրկուեցաւ այդ ծիրէն ներս, որուն բարձր հովանաւորութիւնը ստանձնեց Իսի լէ Մուլինոյի քաղաքապետ-երեսփոխան Անտրէ Սանթինի:

Արդարեւ, 17-19 Մայիս 2007ին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս հիւրընկալեց Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր թէ՛ այլ մարզական խումբեր՝ պասքէթի եւ Ֆութպոլի 100 մարզիկներ, հասած Եւրոպայի տարբեր երկիրներէն, նաեւ՝ հեռաւոր Թորոնթոյէն:

Իսի լէ Մուլինոյի «Ա. Միմոն» մարզադաշտին վրայ տեղի ունեցած մրցաշարքը իրարու դէմ հանեց պասքէթի մարզէն ներս՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի, Գա-

նատայի եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խումբերը, Զուլցերիոյ Հայկական Միութիւնը եւ Գանատահայ Միութիւնը:

Իսկ Ֆութպոլի մրցաշարքին մասնակցեցան Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի, Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի, Պուտափէշթի եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խումբերը:

Երեք օրերու մրցումներու աւարտը պարզեց հետեւեալ պատկերը:-

Պասքէթի առաջին դիրքը զբաղեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս, երկրորդը՝ Հ.Մ.Ը.Մ. Թորոնթո, երրորդը՝ Գերմանիա, չորրորդը՝ Ժընեւ եւ հինգերորդը՝ Հ.Մ.Ը.Մ. Լոնտոն:

Ֆութպոլի առաջին բաժակը կրկին վիճակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի, երկրորդը՝ Հ.Մ.Ը.Մ. Լոնտոնի, երրորդը՝ Հ.Մ.Ը.Մ. Պուտափէշթի եւ չորրորդը՝ Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի: Սակայն ինչպէս ծանօթ է բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, պարտուող չկար, ոգեկան յաղթանակը բոլորինն էր:

**ՓԱԿՍԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆԸ**  
19 Մայիսի յետմիջօրէին, աւելի քան

250 համակիրներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ հաւաքուած էին մարզադաշտ, ներկայ գտնուելու մրցաշարքի փակման պաշտօնական հանդիսութեան: Հոն կը զըտնըէին պետական եւ կրօնական անձնաւորութիւններ՝ Իսի լէ Մուլինոյի քաղաքապետ-երեսփոխան Անտրէ Սանթինի, քաղաքապետութեան կցորդ Նիքոլ Եսայեան, քաղաքապետական խորհրդական եղբ. Յարութ Խանճեան եւ մար-







Փակման հանդիսութեան ներկայ ճիւղերը:

զական պատասխանատու Մարզան: Ներկայ էին նաև Փարիզի Առաջնորդ Գիւտ Արք. Նաքքաչեան, Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան լիազօր ներկայացուցիչ Համլէթ Գասպարեան եւ առաջին քարտուղար Սամուէլ Լալայեան, ինչպէս նաև քոյր միութիւններու ներկայացուցիչներ:

Տողանցքը առաջնորդուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի շեփորախումբին եւ սկաուտներուն կողմէ, ազգային եղանակներով: Անոնց յաջորդեցին մարզիկները, որոնք դիմաւորուեցան խանդավառ ծափողջոյններով:

Սկաուտական կազմը կատարեց խմբերգ մը: Քոյր Վերժին Միքայէլեան մեներգեց «Լորիկ» երգը, իսկ քոյրեր Վանա Քէլէճեան եւ Սոֆիա Սանթուրեան մեկնարանեցին իրենց յորինած Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի 30ամեակին նուիրուած երգը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ բաժակներու տուչութիւն՝ յաղթող խումբերուն, ինչպէս նաև լաւագոյն մարզիկներուն (Փութպոլի մարզիկ՝ Խաչիկ Խաչերեան, իսկ պասքէթի՝ Գերմանիայէն Ռուբէն Յակոբեան): Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը իր կողմէ պատրաստուած յիշատակի նուէրներով պատուեց պատուոյ հիւրերը:

Ապա, խօսքեր արտասանեցին քաղաքապետ-երեսփոխան Սանթինի, Գիւտ Արք. Նաքքաչեան, Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով եղբ. Լեւոն Պաղտասարեան եւ վարչութեան կողմէ եղբ. Հրաչ Սիսեռեան, որոնք բո-

լորն ալ բնորոշեցին Հ.Մ.-Ը.Մ.ի կարեւորութիւնը սերունդներու դաստիարակութեան մէջ:

Երեկոյեան, տեղի ունեցաւ մարզիկներուն նուիրուած պարահանդէսը, զոր հայկական երգերով խանդավառեց երգիչ Քրիշան իր նուագախումբով:

300 հոգի ներկայ գտնուեցան այդ գիշեր: Հոն կը գտնուէր նաև քաղաքապետ-երեսփոխան Սանթինի, որ իր սրտի խօսքը ուղղեց ու շնորհաւորեց մասնաճիւղը՝ իր 30ամեակին առիթով եւ իր ջերմ բարեկամութիւնը յայտնեց հայ ազգին, անոր արդար դատին պաշտպանութեան՝ Յեղասպանութեան ճանաչման ճամբով եւ մեր միութեան հանդէպ:

Խօսք առին նաև Զուլեյքերահայ







Միութեան ատենապետ Վահէ Կապրաշ եւ Հ.Մ.Ը.Մ.-ի Պուտափէշթի մասնաճիւղի պատասխանատուն: Կատարուեցաւ յուշանուէրներու փոխանակում:

**ԸՆԿԵՐԱՅԻՆ ՄԹՆՈՒՈՐՏԷ**

Փարիզ ժամանող հիւր մարզիկները վստահաբար պիտի չմոռնան Փարիզի տեսարժան վայրեր այցելութիւնները, գիշերային Փարիզը, ոչ ալ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան հրահրով բոլոր մարզիկներուն, Սկաուտ. խորհուրդին եւ պատասխանատուներուն «Տիամանթէր»ի մէջ արուած ընթրիքի սեղանը, ուր հայկական ժողովրդային եւ ազգային երգերով ստեղծուեցաւ մտերմիկ մթնոլորտ՝ հիւրաբար հոն գտնուող երգիչ Ատիս Հարմանտեանի մասնակցութեամբ:

Ձերմ մթնոլորտ, տարբեր երկիրներու քաղաքացիներ, սակայն նոյն նպատակներն ու տեսլականները ունեցող Հ.Մ.Ը.Մ.-ական թէ ալ միութիւններու



Հ.Մ.Ը.Մ.-ի Հունգարիոյ ֆութպոլի խումբը:

պատկանող հայ մարզիկներ քանի մը օրերու ընթացքին մտերմացան ու զարձան ծանօթներ:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ժը-

րաջան աշխատանքը ղրական արդիւնքով աւարտած էր:

Յաջողած էր 30ամեայ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը: Վստահաբար:

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

**HOTEL**



**PAVILLON MONCEAU**  
**PARIS**

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com





# ԵՐԱՋՐ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

